

Ն. ՌՌԻԲԻՆՇՏԵՅՆ

1929 ԹՎԱԿԱՆԸ
ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻ

Դասախոսություն՝ կարդացված մարտիզմ-լենինիզմի
ամբիոնների ղեկավարների համամիութենական
խորհրդակցությանը 1930 թ. հուլիսի 7-ին

338.1(47)
Ղ-78

338.1(47)

Դ-78

աբ

Ն. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ

1929 ԹՎԱԿԱՆԸ ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻ

Դասախոսություն՝ կարդացված մաթսիզմ-լենինիզմի
ամբիոնների ղեկավարների Համամիութենական
խորհրդակցությանը 1939 թ. հուլիսի 7-ին

18.02.2014

30.211

1383
40

Н. РУБИНШТЕЙН
1929 ГОД—ГОД ВЕЛИКОГО
ПЕРЕЛОМА

Государственное издательство политической литературы
Ереван • 1940

Մեր կուսակցության պատմության մեջ կան տարիներ, վրոնք կարևորագույն սահմաններ, պատմական զարգացման շրջադարձային ետապներ են հանդիսանում: Այդ շրջադարձային ետապները հաստատում են դիալեկտիկայի հայտնի օրենքը՝ «քանակական դանդաղ փոփոխությունների անցումը փոքրակական արագ և հանկարծակի փոփոխությունների»: Աստիճանական, դանդաղորեն աճող փոփոխություններն եկոնոմիկայի մեջ, արտադրական հարաբերություններում, մարդկանց դիտակցության մեջ՝ այս ամենն արտահայտվում է մասսաների բուն շարժման մեջ, մասսաներ, վրոնք գլխավորում է բոլշևիկների կուսակցությունը և տալիս է նոր վիճակ, նոր վրակ:

Ուղիղ տասը տարի յե մեզ բաժանում կուսակցության պատմության և մեր յերկրի պատմության մեջ յեղած այդպիսի շրջադարձային ետապից: 1929 թվականը մտել է վոչ միայն Խորհրդային Միության պատմության, այլ նաև մարդկության պատմության մեջ, ընկեր Ստալինի բնորոշումով, վրակես «մեծ բեկման տարի»:

1929 թվականը պարզապես շրջադարձային ետապ, հասարակ բեկման տարի չէր, այլ մեծ բեկման տարի, վրովհետև այդ ժամանակ շրջադարձ կատարվեց դեպի սոցիալիզմի ամբողջ Ֆրոնտով վճռական հարձակումը, վճռական բեկում աշխատանքի արտադրողականության բնագավառում, միջակի պատմական շրջադարձը դեպի կոլտնտեսությունները, շրջադարձ դեպի կոլտնտեսային մասսայական շարժումը և համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության, վրակես դասակարգի, լիկվիդացիան:

Վրոնք են այդ մեծ բեկման նախադրյալները, նրա բովանդակությունը և նրա պատմական նշանակությունը:

1926 թ. կուսակցությունն սկսեց մասսաներին կազմակերպել յերկրի սոցիալիստական ինդուստրացման ստալինյան լոզունգի իրականացման համար, վրը նախապատ-

բաստվել եր վերականգնման ժամանակաշրջանի հաղթական ավարտամար: Ամենակարճ ժամկետում վերականգնման ժամանակաշրջանի հետևանքով բուժվեցին այն վերքերը, վոր ժողովրդական տնտեսութեանը հասցրել եր իմպերիալիստական պատերազմը և ինտերվենցիան, ձեռք բերվեց ժողովրդական տնտեսութեան նախապատերազմյան մակարդակը: Բայց այդ մինչպատերազմյան մակարդակը, վորին մենք հասանք սոցիալիստական ինդուստրացիան համար մղվող պայքարի սկզբում, հետամնաց յերկրի մակարդակ եր:

Քիչ ջանք չի պահանջվում այժմ՝ պատկերացնելու մեզ մեր յերկիրն այնպես, ինչպես նա կար 1926—1928 թվերին, ընդամենը 10—12 տարի առաջ, յերկիր՝ առանց Դենպրոպեսի, առանց Մադնիտոգորսկի կոմբինատի, Սարկովի և Չելյաբինսկի տրակտորային գործարանների, առանց հարյուրավոր ու հազարավոր հզոր ձեռնարկութեանների, ձեռնարկութեաններ, վորոնք բարձրացել են ստալինյան հնգամյակների տարիներին:

«Յերկիրը—ընկեր Ստալինի արտահայտութեամբ,—այն ժամանակ սպրում եր տմենասոսկալի սովի շրջան՝ տեխնիկայի բնագավառում»¹:

Յերկրի գյուղատնտեսութեան համար այն տարիներին վորոշիչ էյին հանդիսանում 25 միլիոն մանրատված գյուղացիական տնտեսութեանները: 1928 թ. գարնանը կոլտնտեսութեանների մեջ էյին ընդամենը գյուղացիական տնտեսութեանների ընդհանուր թվի 1,7%-ը: Տրակտորները շատ քիչ էյին: 1928 թ. կար 13 տրակտորային կալոնար (ՄՏ կայաններն ավելի ուշ ստեղծվեցին), ըստվորում այդ կալոնարները, սովորաբար, բաղկացած էյին սակավագուր ֆորգոններից: Տրակտորային կալոնարները վարում էյին 76 հազ. հեկտար տարածութեան՝ մոտավորապես մեր յերկրի հարավ-արևելյան, առանձնապես վոչ մեծ շրջանի միջին տարածութեան չափ:

1928 թ. իՍՆՄ գյուղատնտեսութեան տեխնիկական զին-

վածութեանը կազմում եր 4,6 միլիոն արոր և 14 միլիոն ձիու գութան. Միութեան մեջ ամբողջ ցանքերի տարածութեան յերեք քառորդը ցանվում եր ձեռքով, կողովից, և, վերջապես, ամբողջ բերքի համարյա կեսը կախվում եր այնպիսի պրիմիտիվ գործիքով, վորպիսին չլիքն է: Բավական ե ասել, վոր 1928 թ. վերջին վորոշում հանվեց «արորը վերացնել յերեք տարում», ըստվորում մատնանշվում եր, վոր «արորը գութանով փոխարինելը գյուղատնտեսական մեքենաշինութեան պրոգրեսիվ հոսանքի արտահայտութեաններից մեկն է»: Նույնիսկ այն ժամանակ, յերբ, հսկայական ջանքերի հետևանքով, ընկեր Ստալինի ղեկավարութեամբ կուսակցութեան մղած պայքարի հետևանքով ավարտվեց վերականգնման ժամանակաշրջանը, մեր յերկիրը դեռևս մնում եր տեխնիկապես հետամնաց յերկիր:

Տեխնիկական այդ հետամնացութեանն անդրադառնում եր նաև մեր յերկրի պաշտպանական հզորութեան վրա: Ընկ. Վորոշիլովը, հանդես գալով հարվածային-կոլտնտեսականների I համագումարում, տվեց կարմիր Բանակի մինչև մեծ բեկման տարվա ռազմական հազեցման ցայտուն պատկերը:

«Մենք,—ասում եր նա,—վատ կամ համեմալ ղեկավարվար երք զինված, շատ ավելի վատ, քան խոշոր կապիտալիստական պետութեանների բանակները:

...Մենք հին բանակից ժառանգել ենք շատ վատ սպառազինում—և՛ ըստ վորակի, և՛ ըստ քանակի: Կար հրացան, հաստոցավոր գնդացի, կար յերեքլույսանոց հրանոթ, կային փոքրաքանակ ավելի ծանր հրանոթներ, և զրանով հիմնականում սպառվում եր մեր ամբողջ սպառազինումը: Միևնույն ժամանակ մեր հնարավոր հակառակորդներն արդեն այն ժամանակ ունեյին... շատ հեռահար ծանր թնդանոթներ, հզոր հորեցներ, շատ տանկեր, հիանալի ավիացիա, քիմիական զորքեր, կապի ամենահարուստ միջոցներ, ինժեներական զորքեր, ծովային հզոր նավա-

¹ Орджоникидзе, Избранные статьи и речи, стр. 292, Госполитиздат, 1939 г.

¹ Ստալին, Ճառ կարճի բանակի ակադեմիականների ավարտման առթիվ, Կուսհրատ, 1935 թ., էջ 10:

տորմ և չափ ուրիշ բաներ, վորոնք ստեղծվել են կոմիտու-
և հաղթելու համար»¹:

Իսկ ի՞նչ ձևեր բերվեց մեր յերկրի եկոնոմիկայի մեջ
սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանի առա-
ջին յերեք տարիներին ընթացքում: Ի՞նչը հնարավորութուն
տվեց կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեանը մեծ
բեկման տարում նախապատրաստելու և կազմակերպելու
ժողովրդական մասսաների բուռն շարժումը: Գյուղացիու-
թեան աշխատավոր մասսաների շրջադարձը դեպի սոցիա-
լիզմը նախապատրաստված եր նախորդ ամբողջ զարգացման
ընթացքով, առաջին հերթին սոցիալիստական ինդուստրիա-
յի և նրա այն ճյուղերի զարգացմամբ, վորոնք գյուղին
մատակարարում են գյուղատնտեսական մեքենաներ: Արդեն
1927 թ. վերջին արդյունաբերութեան և գյուղատնտեսու-
թեան աճումը գերազանցեց նախապատրաստված մակար-
դակը: Ժողովրդական տնտեսութեան մեջ արդյունաբերու-
թեան տեսակարար կշիռը 1928/29 թ. կազմում եր 48,7%—
մինչպատրաստված մակարդակից մեքենայի տոկոս բարձր:
Սոցիալիստական սեկտորը արդյունաբերութեան մեջ 1924—
1925 թ. 81%-ից 1926—1927 թ. հասավ մինչև 86%-ի,
գուրը մղելով մասնավոր սեկտորը:

Այդ նշանակում եր, վոր արդյունաբերութեան ընդա-
վառում «ով—ում» հարցը նախորոշված է հոգևոր սոցիա-
լիզմի: Արդյունաբերութեանն արդեն ինդուստրացման ժա-
մանակաշրջանի հենց սկզբում աճում եր հսկայական, մինչ
այդ չտեսնված, տեսլերով: Բախական և ասել, վոր սո-
ցիալիստական խոշոր արդյունաբերութեանը 1927 թվին
1926 թվին համեմատութեամբ արտադրանքի 18% աճ տվեց:

Գյուղատնտեսութեան մեջ բանն այլ եր: Թեև ամբող-
ջութեամբ վերցրած՝ գյուղատնտեսութեանն անցել եր մինչ-
պատրաստված մակարդակը, սակայն նրա գլխավոր ճյու-
ղի՝ հացահատիկային տնտեսութեան համախառն արտա-
դրանքը հասավ մինչպատրաստված մակարդակի միայն
91%-ին, իսկ հացահատիկային արտադրանքի ապրանքային

մասը հաղով հասնում եր մինչպատրաստված մակարդակի
37%-ին:

Իր «Հացի ճակատում» պատմական յեղույթի մեջ ընկեր
Ստալինը ցույց տվեց մեր յերկրի գյուղատնտեսութեան
այդպիսի դրութեան պատճառները: Մինչև պատրաստված կար
մոտ 16 միլիոն անհատական գյուղացիական տնտեսու-
թեան, իսկ կալվածատիրական հողատիրութեան լիկվիդա-
ցիայի հետևանքով 1928 թ. կար մոտ 25 միլիոն գյուղա-
ցիական կիսաապագական սակավապրանքային տնտեսու-
թեան: Նրանք ապրանքային հաց ելին տալիս իրենց ամ-
բողջ արտադրանքի ամբողջ գումարի միայն 11,2%-ի չա-
փով: 1928 թ. հացի դժվարութեանների հիմքը մեր գյու-
ղատնտեսութեան ապրանքայնութեան զանդաղ զարգացումն
եր՝ ապրանքային հացի պահանջի խիստ աճման պայմաննե-
րում: ՀամԿ(բ)Կ XV համագումարում, վորը պատմութեան
մեջ մտել և վորպես կոլեկտիվացման համագումար, ընկեր
Ստալինի կողմից ղեկավարվող կուսակցութեանը վորոշում
ընդունեց գյուղատնտեսութեան կոլեկտիվացումը ամեն
կերպ ծավալելու մասին: ՀամԿ(բ)Կ XV համագումարը դե-
րեկտիվ տվեց՝ կուլակութեան վրա հետագա հարձակման
մասին:

Գյուղատնտեսութեան կոլեկտիվացման խնդիրը ընկեր
Ստալինը զարգացրեց 1928 թ. պատմական մի ամբողջ
չարք յեղույթների մեջ:

«Յեղքն ամենից առաջ այն և,—ասում եր ընկեր Ստա-
լինը 1928 թ. մայիսին,—վոր մանր, հետամնաց և ցիրու-
ցան գյուղացիական տնտեսութեաններին անցնենք մեքենա-
ներով ոժտված, գիտութեան տվյալներով զինված և առա-
վելագույն քանակով ապրանքային հաց արտադրելու ընդու-
նակ՝ միավորված՝ խոշոր, հանրային տնտեսութեանների:
Յեղքը—հողագործութեան մեջ անհատական գյուղացիական
տնտեսութեանից կոլեկտիվ, հանրային տնտեսութեան անց-
նելն և»¹:

Գլխավոր խնդիրը, վոր դրեց ընկեր Ստալինը կուսակ-
ցութեան առաջ, բոլոր աշխատավորների առաջ, այդ այն

¹ Ворошилов, Статьи и речи, стр. 540—541, Госполитиздат, 1937 г.

¹ Ստալին, Լենինի մի հարցերը, էջ 279:

եր՝ արագացրած տեմպերով վերադիմել, վերակառուցել մեր արդյունաբերությունը: Դրանումն էր սոցիալիզմի յերկրի պաշտպանական հզորություն ամրապնդման բանալին, մի յերկիր, վորը գտնվում էր կապիտալիստական չըջապատման մեջ: Դրանումն էր գյուղատնտեսություն սոցիալիստական վերակառուցման բանալին:

Այդ մեծ խնդիրը պահանջում էր միջոցների կուտակում, պահանջում էր զոհաբերություն, ամեն ինչում ամենախստագույն խնայողություն:

«Ուստի անհրաժեշտ էր,—ասում էր ընկեր Ստալինը,—զինվել ամուր նյարդերով, բոլշևիկյան տոկունությամբ ու համառ համբերությամբ, վորպեսզի հաղթահարեյինք առաջին անհաջողությունները և անշեղորեն առաջ դնայինք դեպի մեծ նպատակը, թույլ չտալով տատանումներ ու անվստահություն մեր շարքերում»:

Կուսակցությունը, հետևելով ՀամԿ(բ)Կ XV համագումարի դիրեկտիվներին, հաստատապես հենվելով չըջվորի վրա և ամրացնելով դաշինքը միջակի հետ, 1928 թ. անցավ վճռական հարձակման կուլակիության դեմ, վորը թեկավորված էր Լենինի—Ստալինի կուսակցության դեմ աջերի ունեցած յեղույթներով: Կուլակիության դեմ մարտ տըրվեց ամենից սուր հարցում՝ հացի հարցում, վորովհետև այդ ժամանակ կուլակները հացի գործադուլ կադմակերպեցին, հրաժարվելով իրենց մոտ կուտակված հացի ավելցուկը վաճառել խորհրդային պետությունը: Ընկեր Ստալինն ասում էր, վոր կուլակային հացի գործադուլը նեպի պայմաններում գյուղի կապիտալիստական տարրերի առաջին լուրջ յեղույթն էր խորհրդային իշխանության դեմ: Կուլակները թազցնում, փառեցնում էյին հացը, վաճառում էյին սպեկուլանտիվ գներով, սպանում էյին կուսակցական և խորհրդային աշխատողներին, հրկիզում էյին կոլտնտեսություններն ու պետական հանձնման կայանները: Կուսակցությունն ու կառավարությունը 1928 թ. կուլակների վերաբերմամբ արտակարգ միջոցներ կիրառեցին: Քրեական

¹ Ստալին, ձառ. Կարմիր Բանակի ախպեմիականների ավարտման առթիվ 1935 թ. մայիսի 4-ին, էջ 12, Կուսհրատ, 1935 թ.:

Որենագրքի 107 հոդվածի հիման վրա այն կուլակներից և սպեկուլանտներից, վորոնք հրաժարվում էյին կայուն գներով հաց վաճառել խորհրդային պետությանը, դատաբանի վճռով բռնադատվում էյին հացի ավելցուկները: Բարձրացվեց կուլակների գյուղատնտեսական հարկը: Միաժամանակ սակավադր գյուղացիական տնտեսություններին 35%-ը ազատվեց գյուղատնտեսական հարկից: Բռնադատված կուլակային հացի 25%-ը ստանում էր չըջվորություն:

Կուլակային դեմադրությունը կտրվեց, և 1928 թ. վերջին խորհրդային պետությունն արդեն ուներ հացի անհրաժեշտ պաշարը:

Մեծ բեկման վճռական նախադրյալը մեր կուսակցություն շարքերի ամրապնդումն էր: Կուսակցությունը հաջողությամբ մերկացրեց տրոցկիստներին—զինովյեվականներին և աջ կապիտուլանտներին՝ կապիտալիզմի ռեստավրատորներին, կուսակցության և ժողովրդի վիճակիմ թշնամիներին: Տրոցկիստական—զինովյեվական բլուր 1927 թ. վերջին իդեապես ջախջախված էր և կադմակերպորեն՝ ջարդուվչուր արված. տրոցկիստները—զինովյեվականները վերածվեցին քաղաքական յերկերեսանինների կլիկի, ժողովրդի թշնամիների ստոր բանդայի:

1928—1929 թ. թ. կուսակցությունն ընկեր Ստալինի դեկավարությունամբ խստագույն հարված հասցրեց աջ կապիտուլանտներին, աջ ռեստավրատորներին: «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» մեջ ասված է, վոր աջ կապիտուլանտների կուլակային հոգին չգիմացավ հատկապես այն ժամանակ, յերբ մենք սկսեցինք հարձակվել կուլակի վրա. այն ժամանակ աջ ռեստավրատորները սկսեցին բացահայտորեն հանդես գալ ի պաշտպանություն կուլակության: «...Բուխարինական—ոհկովական խումբը, վորը հանդես էր յեկել կուսակցության դեմ՝ կուսակցությունը կուլակության վրա հարձակման անցնելու կապակցությամբ, այլևս հնարավորություն չունեց իր կապիտուլանտային դեմը քողարկելու և ստիպված էր պաշտպանել մեր յերկրի ռեակցիոն ուժերին և, ամենից առաջ, կուլակիությանը—բացահայտորեն, առանց դեղադարդելու, առանց դիմա-

դի»¹: 1928 թ. ձմեռը, ջարդելով աջ կապիտուլանտների դեմադրութունը, կուսակցութունը կենսադործեց կուլակների հացի դործադուլը ջախջախելու վերաբերյալ ստալինյան դերեկախները: Կուսակցութունն՝ ընկեր Ստալինի ղեկավարությամբ հարված հասցրեց աջերին Համկ(բ)Կ Կենտկոմի 1928 թվի ապրիլյան պլենումում, յերբ Բուխարինը, Ռիկովը և աջ կապիտուլանտների այլ առամաններ, հենվելով Ֆրոմկինի պրովոկացիոն նամակի վրա, պահանջում էին նվազեցնել կապիտալ շինարարության ծախսերը, աշխնքն՝ ընդհատել ծանր ինդուստրիայի զարգացումը, հրաժարվել կուլտնտեսութուններն ու խորհտնտեսութունները զարգացնելուց, վորը հնարավորութուն կտար անսահմանորեն զարգացնելու կուլակային տնտեսութունը:

Ընկեր Ստալինը մերկացրեց աջերի ստոր մանյովրները Կոմինտերնի V կոնգրեսում և կուսակցությանն ու Կոմինտերնին ցույց տվեց աջ կապիտուլանտների դավաճանական դիրքը նաև միջազգային հարցերում:

Բացառիկ նշանակութուն ունեւ աջերի ջախջախումը 1928 թ. ամառը Մոսկվայի կադմակերպության մեջ, վորտեղ կապիտալիզմի ռեստավրատորները ծավալել էին քայքայիչ աշխատանք, վորը կայանում եր դժվարութունների մասին խուճապային «ինֆորմացիաներ» հաղորդելու, Մոսկվայի կադմակերպությունը ամեն կերպ կուսակցության Կենտկոմի դեմ հանելու փորձերի մեջ: Այնքը քարոզում էին զիջումներ անել կուլակությանը. Բուխարինը և նրա հակահեղափոխական դպրոցիկը՝ Ուզլանովը և ուրիշները դեմ էին դուրս գալիս ծանր ինդուստրիայի զարգացմանը, Դնեպրոստրոյին, միջոցները ծանր արդյունաբերությունից թեթեւի մեջ տեղափոխելու ոգտին: Մոսկվան, պնդում էին աջերը, պետք է մնա «չթի» քաղաք: Այնքի քայքայիչ աշխատանքը հեշտանում եր նրանով, վոր այդ ժամանակ նրանք արդեն ստեղծել էին կոնսպիրատիվ կադմակերպություն, վորի մեջ մտնում եր Յագոդան և ուրիշ: Կրկնելով տրոցկիստների 1920 և 1923 թ. թ. փորձերը, աջերը ուզում էին քայքայում մտցնել բոլշևիկներին մայրաքաղա-

քային կուսակցական կադմակերպության շարքերը: Բայց նրանց հաշիվները տապալվեցին: Ընկեր Ստալինի կողմից նախադուշացված Մոսկվայի բոլշևիկներն իրենց շարքերից դուրս նետեցին կապիտուլանտներին:

«Այ թեքման հաղթութունը մեր կուսակցության մեջ, — ստում եր ընկեր Ստալինը 1928 թ. հոկտեմբերին ՄԿ և ԽՎՀ պլենումում, — սանձալույծ կաներ կապիտալիզմի ուժերը, կխարխլեր պրոլետարիատի հեղափոխական դիրքերը ու կբարձրացներ կապիտալիզմը մեր յերկրում վերականգնելու շանսերը»¹:

Այնքը, ինչպես և տրոցկիստները, լիովին անցան քաղաքական յերկերեսանիւթյան դիրքերը. ծառայության վարձվելով ոտարերկրյա հետախուզությունների մոտ, նրանք սկսեցին քայքայիչ աշխատանք կատարել կուսակցության և խորհրդային իշխանության դեմ, ժողովրդի դեմ:

1928 թ. աշնանը Ռիկովն ու Բուխարինը, վորոնք ալիւլի առաջ էին կապլած տրոցկիստների-զինովյեականների պարապլուխների հետ, իրենց դործականերին դիրեկտիվ տվին՝ ուժեղացնել հակահեղափոխական աշխատանքը: Ռիկովը աջ-տրոցկիստական բլոկի մասնակից, ոտարերկրյա պետության լրտես Չերնովին ստում եր. «Դուք, Չերնով, հանդիսանում եք Ուկրաինայի առևտրի ժողկոմը, նստած եք Հափանոց պատասխանատու աշխատանքում: Չեր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի . . . դադարեցնեք միջակին՝ գլուխի միջակային մաստաների վրա այն ռեսպեսիվ միջոցառումներին տարածման միջոցով, վորոնք կառավարությունը սահմանել է կուլակի վերաբերմամբ: Խորացրեք շեղումները, չարացրեք միջակին»: Հենց այդ նույն ժամանակ Բուխարինը աջերի հակահեղափոխական կադմակերպության մեկ ուրիշ մասնակցի, հին պրովոկատոր Խվանովին առաջադրանք տվեց. «Մեր խնդիրն է՝ Հյուսիսային Կովկասը դարձնել ռուսական Վանդեա»:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ կուսակցության կողմից աջ կապիտուլանտների ստոր մանյովրներին մերկա-

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 304—305:

¹ Համկ(բ)Կ պատմություն: Համառոտ դասընթաց, էջ 396:

ցումը վիթխարի դեր խաղաց յերկրի սոցիալիստական ին-
դուստրացիայի և կոլեկտիվացիայի խնդիրները կատարելու
համար բանվոր դասակարգին և չքավոր-միջակային գյու-
ղացուկությանը մոբիլիզացիայի յենթարկելու գործում:

Չափազանց կարևոր եր ալն, վոր ընկեր Ստալինը մեր-
կացրեց աջ կապիտուլանտների թեորիկներն ուստավրա-
տորական եյությունը, կուլակային բովանդակությունը:

Կուլակը կոչում եր իր տնտեսության խաղաղ, անխռով
պարզացման համար, կապիտալիստական կուտակման աղա-
տության համար: Կուլակին ոգնության եր դալիս բուխա-
րինական «սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճելու և
դասակարգային պայքարի մարելու» «թեորիան»: Կուլակը
կատաղորեն պայքարում եր խորհանտեսությունների և
կոլտնտեսությունների դեմ: Կուլակի աղնկարման արտա-
հայտություն հանդիսացավ «ինքնահոսի թեորիան»: Կու-
լակը բոլոր յեղանակներով բողոքում եր գյուղի բնակչու-
թյունը չքավորների, միջակների և կուլակների բաժանելու
դեմ, և ալդ բանում նրան ոգնում եյին աջ կապիտուլանտ-
ները իրենց հակահեղափոխական ալն «թեորիայով», թե իբր
գյուղացիությունը միատարր ե, համատարած կերպով մի-
ջակային մասսա յե: Կուլակները ձգտում եյին անընդհատ
բարձրացնել հացի գները: Կուլակության ալդ պահանջների
արտահայտություն եր բուխարինական-ուիկոլյան, կուլա-
կային «չուկայի նորմալացման թեորիան»:

Աջ կապիտուլանտների ալդ բոլոր խորամանկ հերյու-
րանքների ամբողջ եյությունը պարզ դարձավ ընկեր Ստա-
լինի պատմական յելույթի շնորհիվ:

Կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ
հաջող կերպով մերկացրեց և ջախջախեց տրոցկիստական-
բուխարինական հակահեղափոխական բանդան և մասսանե-
րին տարավ յերկրի սոցիալիստական ինդուստրացիայի
ուղիով, գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղիով:

* * *

Բանվոր դասակարգի համար, աշխատավոր գյուղա-
ցիության համար ի՞նչ եր նշանակում յերկրի սոցիալիստա-
կան ինդուստրացիայի քաղաքականությունը: Արդեն սոցիա-

լիստական ինդուստրացիայի սկզբնական շրջանը նշանակում
եր բանվոր դասակարգի նոր, շատ ավելի մեծ կոնսոլիդա-
ցիա, քան վերականգնման ժամանակաշրջանում: Խսկապես,
բանվորների թիվը միմիայն խոշոր արդյունաբերության
մեջ մի տարվա ընթացքում, 1926/27-ից մինչև 1927/28
տվեցալ 2439 հազարից մինչև 2632 հազարի, կամ հա-
մարյա 200 հազարով, իսկ ֆիզիկական աշխատողների ընդ-
հանուր քանակն աճեց 335 հազարով: Գործազրկությունը
կրճատվում եր: Յեթե առաջ բանվորի ընտանիքում հաճախ
կար միայն մեկ աշխատող, ապա հիմա ընտանիքի միացած
անդամներն ել սկսեցին մասնակցել արտադրությանը:
Բարելավվեց աշխատավորների նյութական դրությունը:
Բանվորների ուսել աշխատավարձն անշեղորեն աճում եր:
Աճեց սոցիալական ապահովագրության բյուջեն: Նշանակա-
լիորեն բարձրացավ ծննդաբերությունը և նվազեց մահա-
ցությունը, մանավանդ յերեխաների մեջ:

Պրոլետարական դիկտատուրայի պատմական նվաճում-
ներից մեկն եր 1927 թ. յոթթամյա աշխատանքային որ մըտ-
ցրեց: Խորհրդային Միության ձեռնարկություններում
յոթթամյա աշխատանքային որը մտցվեց հենց ալն տարինե-
րին, յերբ կապիտալիստական համարյա բոլոր յերկրներում
բուրժուազիան բանվորից խլում եր ութթամյա աշխատան-
քային որը:

Սոցիալիստական արդյունաբերության աճումը նշանա-
կում եր նույնպես ժողովրդական յեկամտի աճում: Ալդ
հանդամանքն ընդգծեց ընկեր Ստալինը կուսակցության XVI
համագումարում տված իր ղեկուցման մեջ: Կուլակների և
քաղաքային կապիտալիստների բաժինը ժողովրդական յե-
կամտի մեջ անշեղորեն և արագ իջնում եր: 1927/28 թ. ալն
հավասար եր 8,1%-ի, 1928/29 թ. — 6,5%-ի, իսկ 1929/30 թ.՝
ընդամենը 1,8%-ի: Կապիտալիստները, նեպմաններն ու
կուլակներն ավելի ու ավելի շատ եյին դուրս մղվում հա-
սարակական արտադրությունից:

Սոցիալիստական կոոպերացիան հասավ համարյա մե-
նաշնորհ դրության մեր առևտրի մեջ: Յեթե 1925/26 թ.
դեռևս պատահում եյին մասնավորների ցուցանակները,
ապա 1928/29 թ. ալդ ցուցանակներն արդեն սկսեցին անհե-

տանալ: Չնայած այն բանին, վոր գյուղատնտեսական պրո-
դուկաների մոտ 25%-ը կոոպերացիայի աշխատանքի թե-
րությունների պատճառով բանվորներն ստիպված էին դեռ-
ևս ձեռք բերել մասնավոր շուկայում, այնուամենայնիվ
բանվորներն ավելի քիչ էին ստիպված լինում գնել մաս-
նավորից, քան առաջ:

Բանվոր դասակարգն իրականում տեսավ այն վիթխարի
նվաճումները, վորոնց նա հասավ Լենինի—Ստալինի կու-
սակցության ղեկավարությամբ:

Սոցիալիստական ինդուստրացումը զարգանում էր կա-
պիտալիստական յերկրներից մեր յերկրի անկախությունն
ամրապնդելու հիման վրա, առանց ստրկացուցիչ փոխառու-
թյունների, առանց կոնցեսիաների: Բանվոր դասակար-
գը տեսավ, թե կուսակցությունն ինչպես հոգատար կեր-
պով պաշտպանում է նրա շահերը: 1928 թ. կուլակային
հացի գործադուլի ջախջախմամբ կուլակին հասցրած հար-
վածը բանվոր դասակարգի համար անմիջական, ուսել նշա-
նակութուն ունեցավ: Ընկեր Ստալինն ասում էր, վոր հա-
ցի գները բարձրացնելու դժուր կուլակության սպեկուլա-
ցիային կուսակցությունը պատասխանեց այնպիսի հարվա-
ծով, վորը փակեց կուլակների ախորժակը՝ սով սպառնա-
լու բանվորներին և կարմիր Բանակին: 1929 թ. յերկիրը
յուրա գնաց առանց ներմուծվող հացի, և այնուամենայնիվ
հաց մատակարարելու գործում ընդհատումներ չեղան:

Բանվոր դասակարգը տեսավ, թե ինչպես կուսակցու-
թյունը պաշտպանում է պրոլետարական դեկտատուրայի
շահերը, բանվոր դասակարգի շահերը, մերկացնելով և
ջախջախելով շախտեցիներին և վնասարարներին՝ միջազգա-
յին կապիտալի գործակալների ամբողջ կոմպանիային,
բանվոր դասակարգի թշնամիներին, վորոնք նոր ինտեր-
վենցիա էին պատրաստում: Մեր յերկրի աշխատավորները
տեսան, վոր կուսակցությունն անողորմ պայքար է մղում
մեր յերկրի ունեցիտն ուժերի պաշտպանների, այլ կոպի-
տուլանտների, կապիտալիզմի ուստավրատորների դեմ:

Բանվոր դասակարգը ջերմորեն արձագանգեց սոցիա-
լիստական ինդուստրացման տեմպերն ուժեղացնելու վերա-
բերյալ կուսակցության կոչին, նա պաշտպանեց կուսակ-

ցությանը՝ կապիտալիզմի այլ ուստավրատորների դեմ նրա
մղած պայքարում: Ստալինյան լոգունդները՝ բոլշևիկյան
ինքնաքննադատության, խորհրդային ապարատի զտման,
բյուրոկրատիզմի դեմ պայքարելու, կուսակցության զտման
և պրոֆմիութենական ապարատի զտման մասին, մեր բու-
րոր կազմակերպությունները վերակառուցելու մասին՝ աշ-
խատավորները դիմավորեցին վիթխարի բավականությամբ:

Բոլշևիկյան ինքնաքննադատության լոգունդը, վոր ըն-
կեր Ստալինն առաջադրել էր դեռևս կուսակցության XV
համագումարում, նա զարգացրեց այլ կապիտուլանտների դեմ
մղած պայքարում: Համկ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. ապրի-
լյան պլենումի աշխատանքների մասին Մոսկվայի կազմա-
կերպության ակտիվի ժողովում տված ղեկուցման մեջ
ընկեր Ստալինն ասում էր.

«Ինքնաքննադատությունը մեզ հարկավոր է, ինչպես
ոգը, ինչպես ջուրը... Թող կուսակցությունը, թող բոլշե-
վիկները, թող մեր յերկրի բոլոր ազնիվ բանվորներն ու
աշխատավորական տարրերը բացահայտեն մեր աշխատան-
քի թերությունները, մեր շինարարության թերություննե-
րը, թող նշեն մեր թերությունների վերացման ուղիները,
վորպեսզի մեր աշխատանքում և մեր շինարարության մեջ
անշարժութուն, լճացում, նեխում չլինի, վորպեսզի մեր
ամբողջ աշխատանքը, մեր ամբողջ շինարարությունը ու-
որի վրա բարելավվի և հաջողութունից դեպի հաջո-
ղութուն գնա»¹:

Ընկեր Ստալինն ընդգծեց, վոր ինքնաքննադատության
լոգունդի առանձին ակտուալությունը բացատրվում է նրա-
նով, վոր մեր դասակարգային հարձակման հանդեպ դիմա-
դրությունը խստորեն սրվել է և դրա համար ել «... հար-
կավոր է արագորեն ազատագրվել մեր սխալներից և թու-
լություններից... յեթե մենք ուզում ենք ամրապնդել հե-
ղափոխությունը և թշնամիներին կազմ-պատրաստ դե-
մավորել»²:

1928 թ. հունիսի 2-ին Համկ(բ)Կ Կենտկոմը հրապարա-

1 «Правда» от 18 апреля 1928 г.

2 «Правда» от 26 июня 1928 г.

կեց դիմում ինքնաքննադատության մասին: Դիմումի մեջ ասվում էր, Վոր բանվոր դասակարգը գյուղացիության մասսայի հետ դաշնակցած, ձեռնամուխ լինելով նոր շինարարության զարգացմանը, հանդիպում է միջադեպին կապիտալիզմի ճնշմանը և կուլակիության, վնասարարների դիմադրությանը, բյուրոկրատիզմին, դանդաղաշարժությանը և քաջըռուկին:

Այնուհետև դիմումի մեջ մատնանշվում էր, Վոր պրոֆմիութենական և կուսակցական կադմակերպություններում բանվոր դասակարգը նույնպես յերբեմն հանդիպում է նեխածության, չինովնիկական վերասերման, սանձարձակության, հարեցողության, մասսաների կարիքների հանդեպ չարամիտ անուշադրության, սնապարծ հաճոյակատարության ու շողոքորթության դեպի «վերնախավերը», տգիտության, անչարժության, պահպանողականության և ռուտինայի: Դիմումը կոչ էր անում ամենամիճակալի կերպով մասսաներին ներգրավել սոցիալիստական շինարարության գործին, կադմակերպել ամբողջ ապարատի ստուգումը և վերահսկողությունը միլիոնավոր մասսաների կողմից, մաքրել ապարատը բոլոր անպետք տարրերից, ծավալել ինքնաքննադատությունը, չնայելով անձնավորությանը, հետևողականորեն անցկացնել ներկուսակցական և պրոֆմիութենական դեմոկրատիան, պայքարել բյուրոկրատիզմի դեմ, ավելի համարձակորեն դեկավար աշխատանքի առաջ քաշել լավագույն բանվորներին:

Սկսվեց սոցիալիստական հարձակման բանակի շարքերի արագացրած վերակառուցումը:

Այդ վերակառուցումն իր վառ արտահայտությունը գտավ 1928 թ. դեկտեմբերին պրոֆմիությունների VIII համագումարում: Այլ ռեստավրատորներն աշխատում էին պրոֆմիությունները վորպես գործիք ոգտագործել սոցիալիստական հարձակման դեմ: Բավական է ասել, Վոր 1928 թ. ընթացքում ՀՆՄԿԽ նախագահության նիստում չքննվեց արտադրական վոչ մի խոշոր հարց: Յերբ ներքևից առաջարկություններ յեղան պրոֆմիությունների յերեսը դարձնել դեպի արտադրությունը, ալ կապիտուլանտները Տոմսկու գլխավորությամբ վոչ միայն հետ էին չպրտում

այդ առաջարկությունները, այլև պրոֆմիութենական կադմակերպություններից գուրս էին քշում գրանց նախաձեռնողներին:

Պրոֆմիությունների VIII համագումարում կուսակցությունը ջախջախեց աջերին: Պրոֆեսիոնալ շարժման գլուխ կանգնեց ընկ. Լ. Մ. Կադանովիչը: Պրոֆմիութենական ներքին բոլոր կադմակերպություններում սկսվեց վերակառուցումը: Պրոֆմիություններից սկսեցին վոնդել ալ սպորտունիստներին, բյուրոկրատներին և ուրիշ թշնամական տարրերին:

«Սմեն մի բանվոր գգաց, — ասում էր ընկ. Կադանովիչը, — Վոր բանը վերաբերում է պրոֆմիություններն ամեն տեսակ նեխածից, ռուտինայից մաքրելուն»¹:

Մասսաների մեջ խոշոր վերելք առաջ բերեց խորհրդային ապարատում գտում կատարելու վերաբերյալ վորոշումը: Պետական ապարատից գտվեցին ավելի քան 50 հազար բյուրոկրատներ և ուրիշ թշնամական տարրեր:

Չաման ընթացքում պարզվեց, Վոր խորհրդային կադմակերպություններում քիչ չէին խորհրդային իշխանության չարաննդ թշնամիներ: Միմիայն Կուբանի ոկրուգում դատարանի, միլիցիայի, սոցապի, աշխատանքի բորոայի ապարատից գտվեցին 800-ից ավելի մարդ: Չտվածները մեկ կտրելի յեր գտնել, որինակ, նախկին ղեներալ-մայոր Անդրեյևիչին, Վորն անցյալում Պետերբուրգի ռադմական ոկրուգի ինտենդանտն էր, ակտիվ պետլուբական և հետման, Վորն աշխատելիս է յեղել վորպես... բեռնիչների պրոֆմիության կուլտաշխատող: Հանդիպում էին նախկին արքունապետներ, շտաբեյստներ, պահնորդականներ: Այդ ամբողջ ադտեղությունը ներքևից՝ մասսաների ջանքերով, կուսակցության դեկավարությամբ գտվեց պետական ապարատից:

Միաժամանակ խոշոր աշխատանք էր տարվում բանվորների առաջընթացն ուղղությամբ: Այսպես, 1929 թ. դարնաից մինչև 1930 թ. մարտը միայն Մոսկվայի մարդի պրոֆմիությունները խորհրդային, կոոպերատիվ և ուրիշ

¹ XVI с'езд ВКП(б), stenografический отчет, стр. 63, 1931 г.

կադմակերպություններում ղեկավար աշխատանքի առաջ քաշեցին ավելի քան 3 հազար բանվորների և բանվորուհիներին:

Ծավալված ինքնաքննադատությունն ոգնեց հայտարարելու մի շարք թարախարհներ, ինչպես, որինակ, առարախանյան գործը, վորտեղ պարզվեց, վոր խորհրդային ապարատը սերտաճել և մասնավորի հետ: Իր մասշտաբով փոքր, բայց վոչ պակաս բնորոշ էր կաշինյան գործը: Սա ակններև կերպով ցույց տվեց, թե պրակտիկայում ինչ են նշանակում աջ «թեորիաները»: Կաշինում (այժմ Կալինինի մարզում) ղեկավար ապարատում տեղավորվել էր աջ կուլակային ղեկավարություն: Կաշինի շրջանում 15 հազար տնտեսությանն ընկնում էր միայն 13 մանր կոլտնտեսություն: «Շեպելի» խորհանտեսությունը կուլակային ղեկավարության ակտիվ ոգնությամբ բաժանվել էր խոշոր խուսթների, ըստվորում խուսթների մի մասն ընկել էր նախկին կալվածատերերի ձեռքը: Առևտրի մեջ, ինչպես ասում էյին աջ կապիտուլանտների ատամանները, «առողջ մասնավորի» կուրս էր վերցված: Շրջանը հետադուրող հանձնաժողովը յերևան բերեց մասնավորի և կոոպերացիայի «սրտառու» համերաշխություն: Այսպես, միևնույն խանութում սիրալիր կերպով առևտուր էյին անում մասնավորի գործակատարը և կոոպերացիայի գործակատարը. նրանք մի գանձապահ ունեյին և «յեղրայրաբար» բաժանում էյին հասույթը:

Կոոպերատիվ առևտրի ապարատը նույնպես աղտոտված էր: Այնտեղ իրենց պատասպարան էյին գտել տերտերները: Կաշինի քաղաքային խորհրդում 59 անգամներեց 11-ը ձայնադուրկ էյին. կոմունալ աշխատողների պրոֆմիության անդամ էյին նախկին իշխան Ուրուսովը, վաճառական Ոխյորխատինը, նախկին գործարանատեր և ուրյաղնիկ: Ինքնաքննադատությունը խեղդված էր:

Յերբ կուսակցությունը՝ բանվորների, չքավորների և միջակների ոգնությամբ ջախջախեց Կաշինի շրջանի աջ կապիտուլանտներին, ապա այնտեղ հսկայական արագությամբ առաջ շարժվեց կոլտնտեսային շարժումը:

Համկ(բ)Կ Կենտկոմի կողմից աջ կապիտուլանտները

մերկացվեցին և ջախջախեցին նաև Սամարայում, Սարատովում, Վոլոգդայում, Վրադիվոստոկում, մի ամբողջ շարք ուրիշ մարզերում, ըստվորում ամենուրեք բանվորական մասսաները, չքավոր և միջակ գյուղացիությունը, կոլտնտեսականները ակտիվորեն մասնակցում էյին կապիտալիզմի աջ տեստավրատորների մերկացմանն ու ջախջախմանը:

Բանվոր դասակարգը ամենայն պարզությամբ գիտակցում էր, վոր նրա դրության բարելավումը, պրոլետարական գիկտատուբայի ամբասնդումը անխցելիորեն կապված են կուսակցության քաղաքականության հետ, յերկրի սոցիալիստական ինդուստրացման ստալինյան քաղաքականության հետ:

Դրա համար էլ բանվոր դասակարգը, ծանր գոհողությունների դիմելով, հավանություն էր տալիս և պաշտպանում կուսակցության քաղաքականությունը, ոգնում էր կուսակցությանը սոցիալիզմի թշնամիների՝ աջ կապիտուլանտների դեմ մղած պայքարում: Բանվոր դասակարգը հաստատորեն հավատում էր Լենինի—Ստալինի կուսակցության գլխավոր գծի հաջողությանը:

Ի՞նչ էր նշանակում կուսակցության քաղաքականությունը սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանում չքավոր—միջակային գյուղացիության համար: Ընկեր Ստալինը 1929 թ. ապրիլին մատնանշում էր, վոր 1926 թ. «... գյուղացիությունը թշնամաբար էր վերաբերվում խորհանտեսություններին, իսկ կոլտնտեսությունները նա բամահրում էր վորպես վոչ մի բանի պետք չեկող «կոմունիստ» բամահրում էր: Այժմ՝ բանն ուրիշ է: Այժմ մեզանում նիս»: Իսկ ա՞յժմ: Այժմ՝ բանն ուրիշ է: Այժմ՝ մեզանում խորհանտեսությունն ամբողջ խափեր, վորոնք արդեն կան գյուղացիության ամբողջ խափեր, վորոնք խորհանտեսություններին ու կոլտնտեսություններին վրա նախաժողով անառնենքով, մեքենաներով, տրակտորներով ոգնելու աղբյուրի վրա: Այժմ՝ վորքան կարող են մեքենաներ ու տրակտորներ տուր միայն, կոլտնտեսությունների գործն ուժեղացրած տեմպերով առաջ կղնա»¹:

¹ Ստալին, Լենինի գծի հարցերը, էջ 348—349:

Իսկ ի՞նչն էր նպաստում գյուղացիության չքավոր-միջակային մասսաների գիտակցության բեկմանը:

Նախ և առաջ, գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը, վորն անհատական գյուղացուն սովորեցնում էր գործը կոլեկտիվորեն վարել:

1929 թ. բնկ. Անդերեյեվը, վորն այն ժամանակ Հյուսիս-սային-Կովկասյան յերկրկոմի քարտուղարն էր, կուսակցության Կենտկոմին գեկուցեց գյուղի աշխատանքի մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշման կատարումը Հյուսիսային Կովկասում: Ձեկուցումը ներկայացնում է մեծ բեկման այն նախադրյալները հիանալի իլյուստրացիան, վորոնց մասին խոսում էր ընկեր Ստալինը:

1928 թ. գյուղատնտեսական կոոպերացիան Հյուսիս-սային Կովկասում արդեն ընդգրկել էր գյուղացիների 50%-ը 1926 թ. 29%-ի փոխարեն: Գյուղատնտեսական կոոպերացիայի հետ կապված էյին մի ամբողջ շարք միջոցառումներ, վորոնք գյուղացիության չքավոր-միջակային մասսաներին ուղղում էյին դեպի կոլեկտիվ, արտելային արտադրության ուղին: Այսպես, Հյուսիսային-Կովկասյան յերկրամասում 1929 թ. կուսակցական կազմակերպությունը ազդու ազդեցություն էր ինտելեկտուալ ստեղծեց, վորն ընդգրկում էր 32 հազ. մարդ: Դա ստորին ախտիվն էր, վորը նպաստում էր գյուղատնտեսական արտադրության բարելավմանը, բարձրացնում և միավորում էր գյուղացիության մասսաներին: Հյուսիսային Կովկասի գյուղում 1929 թ. արտադրական խորհրդակցությունների մեջ ընդգրկված էյին 100 հազարից ավելի մարդ:

Յերրորդ հանգամանքը, վոր նպաստեց գյուղացիական մասսաների գիտակցության բեկմանը, գյուղի եկոնոմիկայի բեկմանը, գյուղատնտեսական արտադրանքի կոնսրակտացիայի հաջողություններն էյին: Կոնտրակտացիան գյուղատնտեսական արտադրությունը կապում էր քաղաքի հետ. այն կապված էր նաև գյուղի արտադրական միջոցառումների հետ: Որինակ, Հյուսիսային Կովկասի յերկրամասում 1929 թ. յերկրամասի ամբողջ ցանքային տարածության 42%-ը պետության կողմից կոնտրակտացիայի յերյենթարկված:

Յերրորդ, լավ կազմակերպված կոլտնտեսությունների առկայությունը գյուղացուն հնարավորություն էր տալիս ստուգել տնտեսության կոլեկտիվ ձևերի առավելությունը անհատական տնտեսության հանդեպ: 1927/28 թ. կոլտնտեսություններում կար 445 հազար գյուղացիական տնտեսություն, իսկ 1928/29 թ.՝ 1.040 հազ.:

Չորրորդ, կարևոր դեր խաղաց նոր տեխնիկայով զինված խորհանտեսությունների առկայությունը: Խորհանտեսությունները համոզեցին գյուղացուն, ինչպես ասում էր ընկեր Ստալինը, նոր տեխնիկայի առավելության և ուժի մեջ: Կուսակցության XVI համագումարին տված քաղաքական հաշվետվության մեջ ընկեր Ստալինը նախադրուշացնում էր, վոր սխալ կլինեք խորհանտեսություններում տեսնել միմիայն հացի ռեսուրսների աղբյուր:

«Խորհանտեսություններն իրենց նոր տեխնիկայով, չբնագատող գյուղացիությանը ցույց տված իրենց ոգնությամբ, իրենց չտեսնված տնտեսական թափով իրոք հանգիստեցել են այն առաջատար ուժը, վորը հեշտացրեց գյուղացիական մասսաների չբնագարձը և նրանց շարժեց դեպի կոլեկտիվացման ուղին»¹:

Ընկ. Անդերեյեվի գեկուցման մեջ հետաքրքիր իլյուստրացիաներ են պարունակվում այդ դրության համար: Հյուսիսային Կովկասում «Խոտորով» խորհանտեսությունը և նրան կից կազմակերպված ՄՏԿ վարեցին 8 հազ. հեկտար գյուղացիական հող, կազմակերպեցին մի շարք կոլտնտեսություններ: «Գիզանտ» խորհանտեսությունը վարեց մոտակա գյուղացիական հողերը: Տեսակավոր սերմացուների, աղնվացեղ անասունների, գյուղատնտեսական մեքենաների, գյուղատնտեսից խորհուրդներ ստանալու համար չքավոր և միջակ գյուղացիությունը դիմում էր խորհանտեսություններին:

Հիմնադրորդ, Խորհրդային կառավարությունը հնարավորություն ստացավ խորհանտեսություններն ու կոլտնտեսություններն ավելի մեծ մասշտաբով ֆինանսավորելու, քան առաջ: 1927/28 թ. պրոլետարական պետությունը կոլ-

¹ Ստալին, Լենինի միջոցով հարցերը, էջ 470:

անտեսություններին Փինանապոլորէլու համար բաց եւ թողել 76 միլիոն ուրբ., 1928/29 թ.՝ 170 միլիոն ուրբ., իսկ հաջորդ տարում՝ 473 միլիոն ուրբի: 1928 թ. դեկտեմբերին ընդունվեց կառավարութեան որոշումը, վորով կոտորետեսություններն առաջին հերթին ելին հող ստանում, արտոնություններ ելին ստանում՝ գյուղատնտեսական հարկի դժով, առաջին հերթին մատակարարվում ելին մեքենաներով, պարարտանյութերով, գյուղատնտեսական վարկով: Կոտորետեսությունների հողաշինարարությունը կատարվում եր հերթից դուրս—այս ամենը դրի յեր առնված Խորհրդային կառավարութեան որոշում և հայտնի դարձավ գյուղացիութեան չքավոր—միջակային ամենալայն մասսաներին:

Վեցերորդ և ամենից կարևոր հանգամանքը՝ գյուղատնտեսութեան տեխնիկական վերազինման համար արագացրած տեմպերով ինդուստրիալ բազա ստեղծելն եր: Ընկեր Ստալինն ընդգծում եր, վոր խորհրդային իշխանութեանն առաջին իշխանութեանն ե աշխարհում, վորը սխտեմատիկ և յերկարատե արտադրական ոգնութեուն ե ցույց տալիս աշխատավոր չքավոր—միջակային գյուղացիութեանը:

Վերջապես, յոթերորդ ֆակտորը հանդիսացավ կուլակութեան դեմ մղվող վճռական պայքարի քաղաքականութեունը և 1928—1929 թ. թ. հացամթերումների ժամանակ կուլակութեան սարսափալի ջախջախումը, վորոնք կուլակային տնտեսութեունը դրին չքավոր—միջակային մասսաների վերահսկողութեան տակ:

Կուլակներին, ասված և «Համկ(բ)կ պատմութեան համառոտ դասընթացի» մեջ, Խորհրդային կառավարութեունը ջախջախեց և գետին կոպրեց հուրախութեուն գյուղացիութեան միլիոնավոր մասսաների:

Կուլակութեան պարտութեունը բաց կուլում հսկայական դեր խաղաց: Ընկեր Ստալինն ասում եր, վոր 1928—1929 թվերին մենք հասանք չքավոր—միջակային գյուղացիութեան քաղաքական լուսավորմանը և կոլտնտեսային շարժումն ընթացավ ավելի վստահ, ավելի արագ տեմպերով:

Այսպես, կուլակութեան XV համագումարից մեկ ու կես—յերկու տարի հետո չքավոր—միջակային գյուղացիութեունը համոզվեց կոլեկտիվացման լողունդի ճշտութեան

մեջ, այն ընդունեց վորպես իր լողունգը, պաշտպանեց կուլակցութեան պայքարը աջ ռեստավրատորների դեմ և կոլեկտիվացման լողունգին պատասխանեց մատասխան շրջադարձ կատարելով սոցիալիզմի կողմը:

Մեծ բեկման նախապատրաստման մեջ կարևորագույն դերը պատկանում եր կուլակցութեան ղեկավարութեանը, ստալինյան իդեաներին:

Ընկեր Ստալինի պատմական յեկույթները՝ ղեկուցումը XV համագումարում (1927 թ.), «Հացի ճակատում» զբույցը, ՄԿ և ՄՎՀ հոկտեմբերյան պլենումում արտասանած ճառը (1928 թ.), «Աջ թեքման մասին Համկ(բ)կ մեջ», Համկ(բ)կ Կենտկոմի ապրիլյան պլենումում արտասանած ճառը (1929 թ.) և ընկեր Ստալինի մյուս յեկույթները վիթխարի բարձրութեան հասցրին սոցիալիզմի կոռուցման մարքսիստական—լենինյան թեորիան, դասակարգային պայքարի և պրոլետարիատի ղեկատուութեան թեորիան, ցույց տվին սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսութեան կոլեկտիվացման ուղիներն ու կոնկրետ խնդիրները:

Ընկեր Ստալինը ցույց տվեց դասակարգային պայքարի սրման պատճառները:

«Սոցիալիզմը,—ասում եր ընկեր Ստալինը՝ 1929 թ. Համկ(բ)կ Կենտկոմի ապրիլյան պլենումում արտասանած իր ճառում,—հանդուրժամը արչալում և կապիտալիստական տարրերի վրա, սոցիալիզմը կապիտալիստական տարրերից ավելի արագ ե աճում, դրա շնորհիվ կապիտալիստական տարրերի տեսակարար կշիռն ընկնում ե, և հենց այն պատճառով, վոր կապիտալիստական տարրերի տեսակարար կշիռն ընկնում ե, կապիտալիստական տարրերն զգում են մահացու վտանգը և ուժեղացնում են իրենց դիմադրութեունը»¹:

Ընկեր Ստալինը ջախջախեց, ջարդուփշուր արեց աջ կապիտուլանտներին՝ կուլակցութեան և խորհրդային իշխանութեան մոխերիմ թշնամիների բոլոր յեկույթները:

Ստալինյան իդեաները կուլակցութեանը, բանվոր դասակարգին և չքավոր—միջակային գյուղացիութեանը նշում

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, Էջ 330:

եյին դասակարգային պայքարի հեռանկարները, նրանց սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսութան կուլեկտիվացման խնդիրները վճռելու գործում վիթխարի մոբիլիզացիայի յենթարկող դեր խաղացին, ստալինյան իդեաները և սոցիալիստական շինարարութան ստալինյան դեկալարութունը նախապատրաստեցին մեծ բեկման տարին:

* * *

Բուլեիկների կուսակցութան և Խորհրդային պետությունից աճման և ամրապնդման հետ աճում և ամրանում էր պլանային դեկալարութունը մեր յերկրի ժողովրդական տնտեսութան նկատմամբ:

1929 թ. ապրիլին XVI կուսկոնֆերենցիան ընդունեց առաջին հնգամյա պլանը, վորը հանդիսանում էր ամբողջ Ֆրոնտով սոցիալիզմի վճռական հարձակման ծրագիր:

Հնգամյակի հիմնական խնդիրն էր՝ ԽՍՀՄ վերածելով ինդուստրիալ յերկրի, մինչև վերջը դուրս մղել կապիտալիստական տարրերին, ընդարձակել տնտեսութան սոցիալիստական ձևերի Ֆրոնտը և տնտեսական բազա ստեղծել ԽՍՀՄ-ում դասակարգերի վոչնչացման համար, սոցիալիստական հասարակության կառուցման համար:

Հենց հնգամյա պլանի ընդունումն ու հաստատումը կուսակցության նվաճումն էր աջ կապիտուլանտների և նրանց դաշնակիցների դեմ մղած պայքարում, վորոնք 1—2 տարի անց մերկացվեցին վորպես «արդյունաբերական կուսակցության» գործիչներ, «գյուղացիական աշխատավորական կուսակցության» հակահեղափոխական եսերա-կուլա-կային կազմակերպութունների մասնակիցներ, մենչեիկներ, հակահեղափոխական կազմակերպության մասնակիցներ:

Կուսակցութունը ջախջախեց դավաճանների բոլոր փորձերը՝ տապալելու ինդուստրացման տեմպերը և յերկիրն ստրկացնելու ոտարերկրյա կապիտալին: Աջ կապիտուլանտների «մինիմալ» այն պլանը, վորը նկատի ուներ կրճատել և խուզել ինդուստրացման գործին արված հատկացումները, մերժվեց: Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ

XVI կուսկոնֆերենցիայում ընդունվեց առաջին հնգամյակի ռալիմալ, այսինքն՝ ամենից բարձր, պլանը վորպես պարտադիր պլան բոլոր պայմաններում: Հնգամյա պլանը նախատեսում էր ժողովրդական տնտեսութան մեջ ներդրել 64,6 միլիարդ ռուբլու գումար, վորից հանրայնացված սեկտորի գծով՝ մոտ 47 միլիարդ ռուբլի, այդ թվում արգյունարբութան մեջ ելեկտրիֆիկացիայի հետ միասին՝ 19,5 միլիարդ ռուբլի: Պլանը նշում էր մինչպատերազմյան արդյունաբերական արտադրանքի յեռապատկում:

Ստալինյան առաջին հնգամյակի վորնաչարը հանդիսանում էր նրա շինարարական ծրագիրը: Արդյունաբերության բոլոր կապիտալ ներդրումների կեսը գնում էր նոր շինարարութանը՝ արդյունաբերության մեջ և տրանսպորտում: Առաջին հնգամյա պլանը նախատեսում էր սոցիալիստական ինդուստրիայի զարգացման յարված, բուռն տեմպ: Հնգամյա պլանի կատարման պայմանն էր, —այդ մասին տվում էր ընկեր Ստալինի յետյթներում և XVI կուսկոնֆերենցիայի վորոշումների մեջ, —սոցիալիզմի ամբողջ Ֆրոնտով ծավալուն հարձակումը կապիտալիստական տարրերի վրա ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում:

Արդեն ստալինյան հնգամյակի առաջին քայլերը ցույց տվին, թե ինչի կարող է հասնել բանվոր դասակարգը, յերբ նրա ձեռքումն է պետական իշխանությունը, յերբ նա ժողովրդական տնտեսութունը վարում է պլանային սկզբունքով, յերբ հնգամյակի կատարման ամբողջ աշխատանքը կառուցվում է ժողովրդական լայն մասսաների աշխատանքային վիթխարի վերելքի հիման վրա:

Ընկեր Ստալինը մատնանշում էր, վոր մեծ բեկման տարվա հիմնական մոմենտը հանդիսացավ վճռական բեկումն աշխատանքի արտադրողականութան արտաբերում: Այդ բեկումն արտահայտվեց մասսաների ստեղծագործական նախաձեռնութան ծավալման և աշխատանքային նոր վերելքի մեջ: Մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը մոբիլիզացիայի յենթարկելուն էյին ուղղված բուլեիկների կուսակցության բոլոր ջանքերը: 1929 թ. աշխատանքային վերելքը զարնանային հեղեղի պես ընդգրկեց բանվոր դասակարգին: Սոցիալիստական մրցությունը, վոր

սկսվեց Լենինգրադի «Красный выборжец» դործարանի կոմյերիտականների նախաձեռնությամբ, սրբնթաց հեղեղի արագութեամբ ընդգրկեց ամբողջ յերկիրը, բոլոր Փարբիկաներն ու դործարանները, անցալ գյուղ:

Շուտով սկսվեց սոցիալիստական մրցության մեջ Փարբիկային և միջգործարանային պայմանագրերի կնքումը: Ապրիլի 8-ին Տվերում պայմանագիր կնքվեց Տվերի, Իվանովոյի, Մոսկվայի մանածագործների միջև: Սոցիալիստական մրցության մեջ մտան կաշեգործները, մետաղագործները, ելեկտրիկները և արդյունաբերութեան մյուս ճյուղերի բանվորները:

Արտադրական պլանի կատարում և գերակատարում, խնդուստրացման տեմպերի ամեն կերպ ուժեղացում, պայքար դործալքումների և դործալիքների դեմ, պայքար պարագուրդների դեմ—ահա այն հիմնական մոմենտները, վոր մտցվում էյին սոցիալիստական մրցության պայմանագրերի մեջ:

ՀամԿ(բ)Կ XVI կոնֆերենցիան ընդունեց Խորհրդային Միութեան բոլոր բանվորներին և աշխատավորներին ուղղված գիմում սոցիալիստական մրցության մասին: Այդ նշանավոր գոկումենտի մեջ ամբողջ ուժով ընդգծված էր առաջին հնգամյա պլանի նշանակութունը մեր յերկրի աշխատավորների առաջ կանգնած պատմական խնդիրների լուծման համար: Դիմումը կոչ էր անում մասսայական նախաձեռնութեան և մասսաների ստեղծագործական եներդրայի արթնացման: Դիմումի մեջ ասվում էր, վոր հնգամյա պլանը կատարելու համար պայքարելիս կուսակցութունն ու բանվոր դասակարգը պետք է կործանիչ հակահարված տան դասակարգային թշնամիներին, բյուրոկրատներին, աջ կապիտալիստներին:

Դիմումի մեջ ասվում էր, վոր սոցիալիստական մրցութունն ու հնգամյալը անխզելիորեն կապված են միմյանց հետ:

«Այդ խնդիրների կատարման նշանով ԽՍՀՄ պրոլետարիատը գնում է հետագա հարձակման պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային թշնամիների վրա:

Կուսակցութունը կոչում է բոլոր պրոլետարներին,

քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորներին և՛ ավելի մեծ յեռանդով ՀամԿ(բ)Կ լենինյան գրոչի ներքո պայքար ծափալել ԽՍՀՄ խնդուստրացման համար, սոցիալիզմի համար»¹:

ՀամԿ(բ)Կ XVI կոնֆերենցիայի գիմումը նպաստեց սոցիալիստական մրցության և՛ ավելի ծավալմանը, մրցության գործը դրեց հուսալի ուղիների վրա:

1929 թ. հունվարի 20-ին առաջին անգամ հրապարակվեց Լենինի «Ինչպես կազմակերպել մրցությունը» հոդվածը: 1918 թ. գրված այդ նշանավոր հոդվածը մի տասնամյակ հետո՝ 1929 թ. հսկայական դեր խաղաց: Աշխատավորները խորամուխ էյին լինում պրոլետարական հեղափոխութեան մեծ հանձարի բոցաշունչ խոսքերի մեջ: Հոդվածը տպագրվեց բոլոր լրագրերում, լույս ընծայվեց մասսայական տիրաժողով. միքանի պրոֆիտիստական կազմակերպություններ իրենք էյին բազմացնում Լենինի հոդվածը և բաժանում բանվորներին:

Մայիսին հրապարակվեց պատմական մյուս գոկումենտը՝ ընկեր Ստալինի առաջարանը «Соревнование масс» գրքին: Այդ գոկումենտը նույնպիսի կարևոր դեր խաղաց, ինչպես և Վլադիմիր Իլյիչի հոդվածը:

Ընկեր Ստալինն իր առաջարանում զարմանալի խորութեամբ մատնանչեց սոցիալիստական մրցության նշանակութունը: Սոցիալիստական մրցությունը «... սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդն է՝ միլիոնավոր աշխատավորական մասսաների մաքսիմալ ակտիվութեան հիման վրա... Մրցությունն այն լծակն է, վորի շղթան թյամբ բանվոր դասակարգը կոչված է շուտ տալու յերկրի ամբողջ անտեսական և կուլտուրական կյանքը—սոցիալիզմի քաղալի վրա»²:

Այնուհետև ընկեր Ստալինը մատնանչում էր, վոր սոցիալիստական մրցության խնդիրն է ջարդել «... բյուրոկրատական կադանքները, լայն ասպարեզ բանալ մասսանե-

¹ ВКП(б) в резолюциях и решениях съездов, конференций и пленумов, ч. II, стр. 365, 1936 г.

² Ленин и Сталин, О социалистическом соревновании, стр. 113, 1937 г.

րի յեռանդի և ստեղծագործական նախաձեռնության ծափաբան համար, յերևան հանել այն վիթխարի ռեզերվները, վորոնք թաղնված են մեր հասարակարգի ընդերքում, և նրանք նետել մեր յերկրի դասակարգային, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին, թշնամիների դեմ մղվող պայքարի նժարների վրա»¹:

Ընկեր Ստալինն ընդգծում էր, վոր գլխավորը—գա մասսաների մեջ թաղնված հակայական ռեզերվների յերևանհանումն ու մորելիզացիան է, մասսաների ստեղծագործական նախաձեռնության համար լայն ասպարեզ բանալը, վոր «... սոցիալիստական մրցությունը մասսաների գործարար հեղափոխական ինֆեռմացիայատուքյան արտահայտությունն է, վորը հենվում է միլիոնավոր աշխատավորների ստեղծագործական նախաձեռնության վրա»²:

Սոցիալիզմի այդ ռեզերվները, վորոնք թաղնված էին մասսաների ընդերքում, լայնորեն բացվեցին 1929 թ.:

Սոցիալիստական մրցությունն ընդունում էր ամենաբազմազան ձևեր: Լենինգրադի Կ. Մարքսի անվան գործարանում ծնունդ առավ հանդիսական արդժինպանը, վորը հիմնված էր մասսաների ստեղծագործական նախաձեռնության վրա, այն բանի վրա, վորպեսզի, հաշվի առնելով սոցիալիստական մրցության թաղնված ռեսուրսները, առաջադրված արդժինպանին հակադրի ե՛լ ալելի բարձր, ե՛լ ալելի հզոր պլան: Առաջավոր բանվորներն սկսեցին ձգե՛հ հետամնաց տեղամասերը: առաջացան վորսհակե՛լ բրիգադներ, հասարակական բուքսերներ, վորոնց ոգնությամբ առաջավոր գործարանները, Փարրիկաները, ցխերը ձգում էին հետ մնացողներին: Յերևան յեկան ДИП՝ «կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» բրիգադներ, վորոնք տանում էին դեպի խորհրդային «ДИП» մարկայով հիանալի զաղչահների ստեղծումը: Ամբողջ յերկրում սկսեց աճել հարվածային շարժումը այն մարդկանց, վորոնք արդյունաբերական պլանները կատարելու գործում ռեկորդներ էին ցույց տալիս: Հարվածային շարժումը,

տարածվելով արագ տեմպերով, շուտով ընդգրկեց ամբողջ յերկիրը: Առ 1 մարտի 1930 թ. սոցիալիստական մրցությամբ ընդգրկված էր վոչ պակաս, քան 2 միլիոն արդյունաբերական բանվոր: 1 միլիոնից ալելին հարվածայիններ էին: Աշխատանքային վերելքը, բանվոր դասակարգի իսկական հերոսությունը վաշտում էր բոլոր այն արեւելքները, վոր այդ շարժման առաջ դնում էր դասակարգային թշնամին: Շատ էին հարվածայիններին հալածելու, մահափորձի յենթարկելու, սպանության դեպքերը մեր ձեռնարկությունների մեջ խցկված թշնամական առանձին տարրերի կողմից, մեքենաները փչացնելու, ամբողջ ագրեզատներ շարքից հանելու փորձերը: Բայց հարվածային շարժման հզորությունը հետ էր չպրտում թշնամու դիմադրությունը, ալ կապիտալիստների, բյուրոկրատների, ձգձգողների, լողերի, աշխատանքային կարգապահությունը խախտողների դիմադրությունը:

Ընկեր Ստալինն ասում էր, վոր մասսաները «... մերցության գործը համարում են իրենց սեփական, հարազատ գործը»¹: Այդ հենց այդպես էլ էր: Լենինգրադի Պրոլետարական գործարանում արտադրական մեծ ստափի տեր բանվոր ընկ. Սլոբոդչիկովը խորհեց այն մասին, թե ինչպիսի ռեսուրսներ կարելի յե մորելիզացիայի յենթարկել, վորպեսզի արագացվեն սոցիալիզմի շինարարության տեմպերը: Նա յեկավ այն յեղրակացության, վոր ԽՍՀՄ բոլոր բանվորները լավ կանեն, յեթե մի տոն ուր աշխատեն հոգուտ սոցիալիստական ինդուստրացման: Ընկ. Սլոբոդչիկովը այդ մասին զրուցեց իր ընկերների հետ, վորոնք աշխատում էին այդ գործարանում, և նրանց կողմից աշակցություն գտավ: Նրա առաջարկությունը շուտով ընդգրկեց Լենինգրադի բոլոր գործարանները, ապա անցավ մյուս քաղաքները, և 1929 թ. ոգոստոսի 6-ին, ինդուստրացման ուր, յերկրում չկար այնպիսի գործարան և Փարրիկա, այնպիսի ցխ կամ ագրեզատ, վորտեղ այդ տոնական ուր չպտուվեյին անիվները, չաշխատեյին զաղչահները: Հսկայական աննախընթաց աշխատանքային վերելք ընդգրկեց մասսաները:

¹ Ленин и Сталин, О социалистическом соревновании, стр. 113, 1937 г.

² Նույն տեղում:

¹ Ленин и Сталин, О социалистическом соревновании, стр. 114.

րին: Հիանալի յե ասված «ՀամԿ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացում», թե «... պատմութեանը դեռ ծանոթ չի յեղել նոր արդյունաբերական շինարարութեան այդպիսի փեթիարի թափ ու ծավալ, նոր շինարարութեան այդպիսի պափոս, բանվոր դասակարգի միլիոնավոր մասնաների աշխատանքային այդպիսի հերոսութիւն»:

Դա բանվոր դասակարգի իսկական աշխատանքային վերելքն էր, վորը ծավալել էր սոցիալիստական մրցութեան հիման վրա¹:

Բանվոր դասակարգը, ինչպես մասնանշում էր բնկեր Ստալինը, գիմում էր դեպի աշխատանքային այդ վերելքը նրա համար, վորպեսզի վերջնականորեն թաղեր կապիտալիզմը և ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցեր:

Բանվոր դասակարգը, մասնավորապես առաջավոր բանվորները՝ հարվածայինները, պատմութեան մեջ չտեսնուած աշխատանքային հերոսութեան օրինակներ ցույց տվեց: Մազնիտոստրոյում կոմյերիտականները գիշերները յերգերով դուրս ելին պալիս հարվածային աշխատանքի: Յերբ 40 աստիճանի սառնամանիքի ժամանակ հարկավոր էր տեղափոխել յերկաթե կոնստրուկցիաները, ապա առջևից գնում էին կոմյերիտականները, իսկ նրանց հետեւից՝ մասնաւոր յերիտասարդութիւնը: Վառ կերպով այդ հերոսութեան մասին պատմում էր Մաքսիմ Գորկին:

«Յես տեսա այդ յերիտասարդութեանը 1928 թիւն գործողութեան վայրում, յերբ հսկայական մերկ դաշտի մեջ միայն տեղ-տեղ ցցվել էին ապագա զինանոցի յերկաթե կառուցները, զինանոց, վորն ստեղծվում էր այդ յերիտասարդութեան յեռանդով փոշու ամպերի, յերկաթե խլացուցիչ գլղղյունի մեջ, քարհատ և բետոնխառնիչ մեքենաների կրճատի ու խշշոցի մեջ»:

Ստալինգրադի տրակտորային գործարանի շինարարութեան մեջ գյուղերից յեկած կառուցողների արտենները սպառնում էին հեռանալ արտհաղուստ չստանալու պատճառով: Այն ժամանակ 19 յերիտասարդ բանվորներ, վորոնք գաժան սառնամանիքի ժամանակ կարում էին մե-

խանիկական-հավաքման ցեխի հատակը, հիանալի դոկումենտ գրեցին շինարարութեան պետին. «Նկատի ունենալով մեր գիտակցականութիւնը, արտհաղուստը չվերցնել, այլ տալ այն բանվորներին, վորոնք նոր են միայն գործարան յեկել, վորպեսզի նրանց մոտ վատ վերաբերմունք չստեղծվի դեպի աշխատանքը»:

Մեծ բեկման տարում, ինչպես և քաղաքացիական պատերազմի տարիներին, առաջավոր դիրքերում էին կոմունիստներն ու կոմյերիտականները: Նրանք Մազնիտոստրոյի, Ստալինգրադի տրակտորային գործարանի, Դնեպրոստրոյի և յերկրի ուրիշ կառուցների շինարարութեան, առաջին շարքերումն էին: Նրանք հարվածային աշխատանքի օրինակներ էին ցույց տալիս, նրանք իրենց շուրջը կազմակերպում էին բանվորների ավելի ու ավելի լայն մասնա-

Մասնաների աշխատանքային ենտուղիազմը արագորեն տվեց իր արդյունքները: Արդեն սոցիալիստական մրցութեան առաջին ամիսներին շատ ձեռնարկութիւններում գերակատարվեց արդ. ֆինայլանը: «Մենք ինքներս չենք համարում այն բանին, ինչի մենք հասնում ենք», — գրում էին բանվորները Կալինինի «Пролетарка» լրագրին: Նվաճվեցին պատմութեան մեջ չտեսնուած տեխնիկական ռեկորդներ: Ստալինգրադի տրակտորային գործարանի շինարարութեան մեջ մեխանիկական-հավաքման ցեխի յերկաթե կոնստրուկցիաների տեղակայումն ըստ ամերիկական ֆիրմայի պլանի պետք է տներ 163 որ: Շինարարութեան վարչութիւնը տվեց 62 որ ժամկետ, իրականում մրցող բանվորները տեղակայումն ավարտեցին 28 որում: Այդ հնարավորութիւն տվեց կառավարութեանը կրճատելու Ստալինգրադի տրակտորային գործարանի կառուցման ժամկետը 8 ամսով, և գործարանը կառուցվեց ռեկորդային կարճատե ժամկետում՝ 11 ամսում:

1930 թ. ապրիլի 28-ին, ժամկետից 17 ամիս շուտ, գործարկվեց Թուրքսիի յերկաթուղին 1442 կիլոմետր յերկարութեամբ: Հիանալի ռեկորդներ ձեռք բերվեցին Դնեպրոդեսի շինարարութեան մեջ: Բետոնային աշխատանքների տարեկան ծրագիրը սահմանվել էր 300—350 հազ.

¹ ՀամԿ(բ)Կ պատմութիւն, համառոտ դասընթաց, էջ 400:

խոր. մետր: Շինարարութեան վարչութիւնն առաջարկեց 417 հազար խոր. մետր, բանվորներէ, ինժեներներէ, տեխնիկներէ, ծառայողներէ կոլեկտիվը՝ 500 հազ. խոր. մետր, իրականում տրվեց 518 հազ. խոր. մետր: Ամերիկեան խորհրդատու ինժեներները, վորոնք այդ նորմաները տեխնիկական անխաբարքներէ ելին համարում, իրենց անկեղծ զարմանքն ու հիացմունքն արտահայտեցին ձեռք բերված արդյունքներէ առթիւ:

Արտադրական պլաններէ դերակատարումը մասսայական յերևույթ դարձավ, և 1929 թ. դեկտեմբերին հարվածաշիններէ համագումարում դրոշմվեց մի լոզունդ, վորը ներքեց եր դալիս՝ հնգամյակը չորս տարում կատարելու լոզունդը: Հայտնի յե, վոր այդ լոզունդը փայլուն կերպով իրագործվեց:

Հարկավոր ե մեզ ականերև կերպով պատկերացնել խորհրդային Միութիւնն այն ժամանակ: Այնպիսի յերկերում, ինչպես Շոլոխովի «Հերկած խոպանը», Կատայիվի «Время, вперед!», Մալիշկինի «Люди из захолустья», մենք գտնում ենք այդ նշանավոր որերի գեղարվեստական վերարտադրութիւնը: Ամբողջ յերկիրը կարծես թե դարձել եր մի վիթխարի շինարարական հրապարակ: Դնեպրոստրոյ, Մազնիտոստրոյ, Կուզնեցկստրոյ, Ուրալմաշստրոյ, Կոմբայնստրոյ, Սելմաշստրոյ, պարզապես կառույցների անուններ չեյին, այլ լոզունգներ, վորոնք մորբիլիդացիայէ ելին յենթարկում լայն մասսաներին: Այդ կառույցներում պայքար եր գնում բոլշևիկյան տեմպերի համար, ոպորտունիստների դեմ, դասակարգային թշնամիների դեմ: Այնտեղ նվաճվում եյին աշխատանքի արտադրողականութեան նոր ռեկորդներ: Այդ իսկական Փրոնտ եր, դասակարգային թշնամու դեմ ուղղված պայքարի Փրոնտ, սոցիալիզմի համար մղվող պայքարի Փրոնտ:

Հնգամյա պլանն արտասովոր կերպով պոպուլար դարձավ մասսաների մեջ: Յերեան յեկան առաջին հնգամյակի քարտեզներ: Այդ քարտեզները, վորոնց մեջ նշված եր նոր ստեղծվելիք գործարանների և Փարբիկաների շինարարութիւնը, լայն տարածում ստացան յերկրում: Հնգամյակի ցուցանիշները այրում եյին մարդկանց սրտերը: Յուրա-

քանչյուր շրջանում, յուրաքանչյուր մարդում մտածում եյին այն մասին, թե ինչպես արագացնել տեմպերը, վորտեղ կարելի յե և հարկավոր ե կազմակերպել նոր շինարարութիւն: Յերբ 1929 թ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումում ընկ. Կուլբիշեվը հանդես յեկավ ստուգիչ թվերի մասին զեկուցումով, ապա պլենումի մասնակիցները տեղերից նրան ընդհատում եյին ռեպլիկաներով. «Խնչպես ե Կենտ.Սեահոյ. մարդը», «ստուգիչ թվերի մեջ նախատեսված ե արդյոք Լիպեցկը», «Խնչպես ե Կիևի հարցը»: Շրջկոմների քարտուղարների առանձնասենյակներէ սեղանների վրա հանդես յեկան հանածոների տեսակները, գրաֆիկներ, դիագրամներ, սխեմաներ և սոցիալիստական շինարարութեան տարբեր տեղամասերում հնգամյա պլանը կատարելու վերաբերյալ ամփոփագրերը: Ամփոփագրերը մտան մեր կենցաղի, մեր կյանքի մեջ: Մի ոտարեկրացի անտեսագետ, վորն այն ժամանակ այցելել եր խորհրդային Միութիւն, իր որագրի մեջ գրել եր. «Միլիոնավոր մարդիկ հանկարծակի դարձան վիճակագիրներ»: Այդ հենց աղպես ել եր, վորովհետև նվիրվածութիւնը կուսակցութեան գլխավոր դին, նվիրվածութիւնը Լենինի—Ստալինի գործին՝ սկսեց ստուգվել արգֆինսպանի կատարման, շինարարութեան պլանի կատարման ամփոփագրերով: 1918 թվին Վլադիմիր Իլյիչը գրում եր, վոր վիճակագրութիւնը «կազմունի գիտութիւնից», վորպիսին նա հանդիսանում ե կապիտալիզմի պայմաններում, սոցիալիզմի ժամանակ կդառնա ժողովրդական գիտութիւն, նրա ողնութեամբ ամեն վոր կկարողանա համոզվել, թե վոր կոմունան ե լավ կառուցում սոցիալիզմը: Այդ մեծ խոսքերն իրականացան:

Հնգամյա պլանը հալսարարապես ներգործող չեւ, վորը հարմարվեր նեղ տեղերին, ինչպես աշխատում եյին դրան հասնել ալ դալաճանները: Պլանը սոցիալիստական հարձակման պարտադիր դիրեկտիվ եր, դիրեկտիվ, վորը կազմված եր դժվարութիւնները հաղթահարելու, դասակարգային թշնամիներին, կապիտուլանտներին ջախջախելու համար: Կոմունիստը կարող եր կոմունիստ համարվել, կոմյերիտականը՝ կոմյերիտական, հարվածայինը՝ հարվածային միայն

այն դեպքում, յեթե նա կատարեր և գերակատարեր պլանը:

Կուսակցութիւնը՝ ժողովրդատնտեսական պլանը կատարելու համար պայքարելիս բանւոր դատակարգի խոր ծախքերում հսկայական մասսայական աշխատանք ծախալեց: Այն լողունքը, վորի համաձայն արդֆինպլանի բախտը վճռւում է ներքեւում, ցեխում, բրդադում, դադաչահի մոտ, դարձաւ կազմակերպական կարեւորագույն լողունքներու մեկը:

Մասսայական շարժման ծախալման մեջ խոշոր դեր խաղաց մեր մամուլը: Բաւական է ասել, վոր կուսակցութեան XVI համագումարի շրջանում 1929 թ. հունիսից, ընդամենը ինը ամսում լրագրերի ընդհանուր միանգամայն տիրաժը աճեց 100%-ով և հասաւ 24 միլիոն ուրինակի: Լրագրերը վաճանի վրա ելին բարձրացնում հարվածայիններին, խարազանում ելին գործալիքներին, կապիտալանտներին, հրապարակում ելին արտադրական պլանները կատարման վերաբերյալ ամփոփագրերը:

Մեծ բեկման տարում արմատապես փոխւեց խորհրդային մարդկանց բուն կենցաղը: Անընդհատի հետեւանքով կերակին սկսեց մահանալ, իսկ հանդստյան որը քաղաքացիութեան իրավունք ստացաւ: Յերկրում ամենից ալելի ժողովրդականութիւնն ստացան «տեմպ», «հարվածային» բառերը:

Յերկրի կյանքը մեծ բեկման տարում փոփոխւեց, վորովհետեւ փոխւեց վերաբերմունքը դեպի աշխատանքը: Սկսեց արմատապես աշխատանքի՝ պատմութեան մեջ աննախընթաց սոցիալիստական կարգապահութիւնը:

Գործալիքների, լողրերի դեմ պայքար սկսեցին մղել իրենք բանւորները: Բանւորական մասսաների խորքերից պահանջներ ելին ստացւում արտադրական նորմաները վերանայելու մասին, նրանց բարձրացման ուղղութեամբ: Այսպես, որինակ, Մոսկւայի № 42 Փարբիկայի բանւորներն ու բանւորուհիները գրում ելին. «Սրանով խնդրում ենք սոցմբցման կարգով և, հասկանալով, վոր դա անհրաժեշտ է, վերանայել նորմաները՝ ալելացնելու իմաստով»: «Ոնցդրում եմ իջեցնել պտուտակների գները, վորովհետեւ նրանց գները շատ բարձր են»—գրում եր Լյուբեցկի

գործարանի բանւոր կոմյերիտական Զելյոնովը: Այդպիսի դեմումները բազմաթիւ ելին ամբողջ յերկրում:

Այժմ աշխատանքը, ինչպես ասում եր ընկեր Ստալինը, ամփալի և ծանր բեռից, վորալիսն եր նա կապիտալիզմի որով, սկսեց վերածւել «պատլի գործի, փառքի գործի, արիութեան և հերոսութեան գործի»: Հենց այդ ել առաջ մղեց մեր ամբողջ յերկրի գարգացման տեմպերը:

Կապիտալիզմի որով աշխատանքը չի դնահատւում հասարակութեան գարգացման համար նրա ունեցած իսկական նշանակութեան տեսակետից: Սոցիալիստական հասարակութիւնը առաջինը պատմութեան մեջ սկսեց աշխատանքը դնահատել հասարակութեան գարգացման համար, արտադրողական ուժերի գարգացման համար նրա ունեցած իսկական նշանակութեամբ: Հենց դա ել պայմանաւորեց սոցիալիզմի շինարարութեան արագ տեմպերը:

Աշխատանքային վերելքը հանդիսացաւ, ինչպես մատնանում եր ընկեր Ստալինը, մեծ բեկման տարւա առաջին և հիմնական նվաճումը:

Մեծ բեկման տարւա յերկրորդ նվաճումն եր ծանր արդյունաբերութեան կապիտալ շինարարութեան համար կուտակման պրոբլեմի լուծումը հիմնականում: Առանց սուրբկացուցիչ փոխառութիւնների, առանց կոնցեսիաների մենք կուտակեցինք այնպիսի միջոցներ, վոր կարողացանք արտադրութեան միջոցների արտադրութեան գարգացման արագացրած տեմպեր վերցնել և նախադրայինը ստեղծեցինք մեր յերկրը մետաղե յերկրի վերածելու համար, վորի մասին իր ժամանակին ասում եր Լենինը: 1927/28 թ. արտադրութեան միջոցների արտադրութեան բաժինը արդյունաբերութեան մեջ, վորը պլանաւորում է ԺՏԳՍ, կազմում եր 42,7%, 1928/29 թ.՝ 44,6, իսկ 1929/30 թ.՝ 48%: 1929 թ. ընթացքում արդյունաբերութեան աճումը ծածկեց առաջին հոգամյակի ուրվագծերը:

Մեծ բեկման տարւա յերրորդ նվաճումը, մի նվաճում, վորն որդանապես կապւած է առաջին յերկու նվաճումների հետ, հանդիսացաւ դյուղացիութեան չքաւորմիջակային մասսաների շրջադարձը գարգացման հին, կապիտալիստական ուղուց դեպի նոր, սոցիալիստական ուղին, մեր յեր-

կրադւործութեան զարգացման մեջ բեկումը մասը ու հետա-
մնաց անհատական տնտեսութեան ղեկի խոշոր, առա-
ջավոր, կոլեկտիվ տնտեսութեանը:

«Գյուղացիները,—ասում էր ընկեր Ստալինը,—կոլտն-
տեսութեաններ են մտնում վո՛չ թե առանձին խմբերով,
ինչպէս այդ տեղի յեր ունենում առաջ, այլ ամբողջ գյու-
ղերով, գաւառականներով, շրջաններով, մինչև իսկ գաւառ-
ներով: Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է
այն, վոր կոլտնտեսութեաններ մեջ է մտել միջակը»¹:

Ձգալորներն ու միջակները ակնհայտնի տեսան արտելա-
յին աշխատանքի, նոր ձևով աշխատանքի նյութական մի-
ջոցները: Գյուղ յեկան տրակտորները: Ահա, թե ինչ էր
գրում «Правда»-ն առաջին տրակտորների հանդես դալու
մասին.

«Տրակտորային կալոնաների առաջին յերթն ահագին
տպալորութեան գործեց: Հարեան դաշտերում գյուղացի-
ները թողնում էին գութաններն ու արորները և գալիս
նայելու, թե ինչպէս էր տրակտորը հողը ակոսում»:

1929 թ. ընկեր Ստալինի նախաձեռնութեամբ ստեղծվե-
ցին առաջին մեքենա-տրակտորային կայանները, իսկ
1929/30 թ. արդեն նախագծվում էր 132 մեքենատրակտորա-
յին կայանների կազմակերպումը: ՄՏ կայանները դարձան
կոլեկտիվացման հենակետերը:

Կոլեկտիվացման գործը կուսակցութեան ղեկավարու-
թեամբ այդքան արագ առաջ գնաց, վորովհետև այդ գործն
իրենց ձեռքը վերցրին Խորհրդային յերկրի առաջավոր բան-
վորները: 1928 թ., յերբ պրոֆեսիոնալ շարժման ղեկի մոտ
կանգնած էին աջ կապիտուլանտները, քաղաքից գյուղ
ուղարկվեցին ընդամենը միայն մեկ ու կես հազար մարդ:
Ինչպէս հայտնի յե, աջ կապիտուլանտները պայքարում
էին կոլտնտեսութեանների դեմ: Ինչի՞ համար պետք է
նրանք ամբարշտեցին կոլտնտեսութեանները: 1929 թ. աջե-
րին ջախջախելուց հետո քաղաքից գյուղ ուղարկվեցին
10700 մարդ, իսկ 1930 թ.—մոտ 75 հազար մարդ, վորոն-
ցից 25 հազ. Մոսկվայի, Լենինգրադի, Իվանովոյի և մեր

յերկրի արդյո՛ւնադերական ուր՛շ խոշորագույն կենտրոնե-
րի առաջավոր բանվորներն էին: Լաւադույն բանվորներին
գյուղ ուղարկելը վերածվեց քաղաքական վիթխարի կամ-
պանիայի:

Գյուղ գնալ ցանկացող բանվորների քանակը գերազան-
ցեց նախնական բոլոր նշումները: Մոսկվայի մարդը,
սկզբնական նշումներով, պետք է գյուղ ուղարկեր 6 հազար
մարդ, իսկ ղեկում էին տվել 18 հազար բանվոր:

Առաջավոր պրոլետարները, վորոնք հիանալի դպրոց
էին անցել դործարանում, ոգնեցին չքավոր-միջակային
գյուղացիութեանը կոլտնտեսութեաններ կազմակերպելու,
համատարած կոլեկտիվացման հիման վրա կոտորելու կու-
լակի ղեկավարութեանը և լիկվիդացիայի յենթարկելու
նրան:

Կուսակցութեան XVI համագումարում ընկ. Կադանովի-
չը չափազանց հետաքրքիր փաստաթուղթ բերեց՝ Կենտրո-
նական Սեահողային մարդի կարմիր պարտիզաններին՝ Համ.
Կ(բ)Կ Կենտկոմին ուղարկած նամակը: Պարտիզանները
գրում էին. «Վողջունում ենք կուսակցութեան Կենտկոմին
և շնորհակալութեան հայտնում քանհինգ հազարական ընկ.
Նեհատնու համար, վորն ուղարկված է քաղաքի և գյու-
ղի գողման համար, վորն աշխատում է 3 ամիս և յերեան
բերեց իսկական նվիրվածութեան սոցիալիզմի դործին և իր
կողմը դրավեց կարմիր պարտիզաններին, չքավորութեան
ակտիվը և բոլոր կոլտնտեսականներին: Խնդրում ենք կու-
սակցութեան Կենտկոմին ավելի շատ աշխատի դադեյահի
բանվորներ տալ մեր գյուղին»:

Գեղարվեստական գրականութեան մեջ տպալորովել է
քանհինգ հազարականի վառ կերպարը. «Բայական է միայն
մտաբերել բանվոր սուտիլովեց փականագործ Դալիդովին՝
Շոլիովի «Հերկած խոպանից»:

Ձգալորների և միջակների մասսայական շարժումը,
վորն ուղղված էր դեպի կոլտնտեսութեանների շինարարու-
թեանը, իր ճանապարհին հանդիպում էր կուլակի և նրա
գործակալութեան՝ աջ դավաճանների կատաղի դիմադրու-
թեան: Դասակարգային պայքարը գյուղում ընդունում էր
կուլակային տեռորի սուր ձևեր ընդդեմ կոլտնտեսութեան-

¹ Ստալին, Լենինի մի հարցերը, էջ 381:

ների կազմակերպիչներին, առաջավոր կոլտնտեսականներին: Մի գյուղում կուլակները փակեցրել էին կոլտնտեսային ակտիվիստների տների հրկիզման «ցուցակը»: Լրագրերում հաճախ հրապարակվում էին հաղորդագրություններ, նման հետևյալին. «Ոկտյաբրսկի գյուղխորհրդում սպանվեց խորհրդի անդամ ընկ. Գրիգորյեվը գլխին դիպած գլնալով: Սպանությունը տեղի ունեցավ հացամթերումների ռեպրեսիաների դեմ հանձնաժողովի նիստի ժամանակ, բազմաթիվ գյուղացիների և մարդիկ ներկայացուցչի ներկայությամբ: Փամփուշտի լիցքը, վրո պղնձի, արճիճի և մեխերի խառնուրդ էր, կարճատև հրացանից դավաճանաբար արձակեց կուլակային բանդիտը»:

Սակայն կոլտնտեսային շարժման հակակուլակային հզոր հեղեղը սրբեց կուլակների և աջ կապիտուլանտների դիմադրությունը:

Նույնիսկ այն կոլտնտեսությունները, վրոնք կազմակերպվել էին դեռևս արակտորներ չունենալով, գյուղացիական գյուղատնտեսական հին ինվենտարի հանրայնացման հիման վրա, — նրանց ընկեր Ստալինը դիպուկ կերպով անվանեց աշխարհի կոլտնտեսություններ, վրոնք ներկայացնում են կոլտնտեսային շինարարության «այսպես ասած՝ մանուֆակտուրային ժամանակաշրջանը», — նույնիսկ այդ կոլտնտեսությունները հսկայական եֆեկտ էին տալիս: Կոլտնտեսությունների ցանքերի տարածությունը 1928 թ. կազմում էր 1390 հազ. հեկտար, 1929 թ.՝ 4262 հազ. հեկտար, 1930 թ. կոլտնտեսություններն արդեն պլանավորեցին 15 միլիոն հեկտար վար: 1929 թ. կոլտնտեսություններն ու խորհանտեսություններն արտադրեցին վոչ պակաս քան 400 միլիոն վուրթ հաց, վրոնք 130 միլիոն փթից ավելին ապրանքային հաց էր: Այդ արդեն ավելի յեր ապրանքային հացի այն քանակությունից, վրո տալիս էին կուլակները 1927 թ.: Յերևան յեկավ «... նյութական բազա այն բանի համար, վրոպեսպի կուլակային արտադրությունը փախարիմեմ կոլտնտեսությունների և խորհանտեսությունների արտադրությամբ»¹:

¹ Ստալին, Լենինի դի հարցերը, էջ 405:

1929 թ. դեկտեմբերի 15-ին «Правда»-ն հրապարակեց պատմական մի դոկումենտ. այդ Հյուսիսային Կովկասի համատարած կոլեկտիվացման ընթացքի մասին առաջին ամփոփագիրն էր:

* * *

Իմպերիալիստները կատաղի չարություններ և ատելություններ էին նայում խորհրդային Միության մեջ կատարվող իրադարձություններին: Միջազգային կապիտալիզմի պայքարը խՍՀՄ դեմ խիստ սրվեց 1929 թ.: Այդ սրման պատճառը հենց այն ժամանակ բացահայտեց ընկեր Ստալինը.

«Խորտակվում է և փոշի յե դառնում խՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու մասին յերազող՝ բոլոր յերկրների կապիտալիստների վերջին հույսը՝ «մասնավոր սեփականություն սրբազան սկզբունքը»¹:

Ձգտելով փրկել կապիտալիստական հասարակարգի այդ սկզբունքը, իմպերիալիստներն ուժեղացրին խՍՀՄ դեմ ինտերվենցիայի դիվանագիտական, ռազմական և այլ նախադատարանություններ: Նրանք աշխատում էին մեկուսացնել խորհրդային յերկիրը, Յեվրոպայում և Ամերիկայում «պատրաստում էին» հասարակական կարծիք, տարածելով բազմատեսակ կեղծիքներ, զրպարտություն անելով «խորհրդային դեմպինգի» մասին, Հոմի պապի անունով խաչակրաց արշավանք կազմակերպելով խՍՀՄ դեմ: Կաթոլիկ յեկեղեցու խոշոր դործիչ կարդինալ Ֆաուլհարերը, Մյունխենում կարդացած իր քարոզներից մեկում կոչ անելով հակախորհրդային խաչակրաց արշավանքի, ասում էր. «Մեր աչքերի առաջ տեղի յե ունենում սարսափելի տրագեդիա: Այդ բոլշևիզմի փորձն է՝ յերկիրը կառավարելու առանց աստծու... կուլտուրա հաստատելու առանց հոգու և հանդերձյալ կյանքի գոյության հավատի, իսկ ժողովրդական տնտեսությունը՝ առանց մասնավոր սեփականություն»:

Անդրիական, Փրանսական և յապոնական իմպերիալիստ-

¹ Ստալին, Լենինի դի հարցերը, էջ 381:

ների ջանքերով Չին-Արևելյան յերկաթուղում կոնֆլիկտ պատրաստվեց: Անգլո-Ֆրանսական շտաբները իրենց կառավարութունները ցուցումներով վճռեցին չոչնդել Կարմիր Բանակի մարտունակութիւնը, խորհրդային իշխանութեան կայունութիւնը: Հայտնի չէ, վոր Կարմիր Բանակը անողոք հակահարված տվեց յայտնական զործակալների՝ սպիտակ-չինական միլիտարիստների զորքերին: Աշխատավորների լայն մասսաների խանդավառութիւնը Չին-Արևելյան յերկաթուղու կոնֆլիկտի ժամանակ ցույց տվեց, վոր խորհրդային ժողովուրդը պատրաստ է իր հայրենիքը պաշտպանելու ամեն մի թշնամուց:

* * *

Մեծ բեկման տարվա նշանակութիւնը բնորոշված է ընկեր Ստալինի «Մեծ բեկման տարին» պատմական հոդվածում և «Համկ(բ) պատմութեան համառոտ դասընթացում»: Մեծ բեկման տարին, ինչպես ասված է «Համկ(բ) պատմութեան համառոտ դասընթացի» մեջ, նշանակում էր սոցիալիզմի խոշորագույն հաջողութիւններ արդիւնաբերութեան մեջ, առաջին լուրջ հաջողութիւններ գյուղատնտեսութեան մեջ, միջակի շրջադարձ դեպի կոլտնտեսութիւնները, մասսայական կոլտնտեսային շարժման սկիզբ:

Հասունացավ համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակութիւնը, վորպես դասակարգ, վերացնելու խնդիրը:

1929 թ. դեկտեմբերի 27-ին մարքսիստ-ադրարագետների կոնֆերենցիայում արտասանած իր ճառի մեջ ընկեր Ստալինը առաջադրեց այդ խնդիրը: Սկսվեց այն բեկումը, վորի մասին «Համկ(բ) պատմութեան համառոտ դասընթացի» մեջ ասված է.

«Այդ ամենախոր հեղափոխական հեղաշրջում էր, մի թուիչ հասարակութեան հին վորակական կացութիւնից դեպի նոր վորակական կացութիւնը, մի հեղաշրջում, վորն իր հետեանքներով 1917 թվականի հոկտեմբերի հեղափոխական հեղաշրջմանը հավասար նշանակութիւն ունի»: Այդ մի հեղափոխութիւն էր, վորը կատարվել էր «...վերին, պետական իշխանութեան նախաձեռնութեամբ, վորին

ցածրից ուղղակի կերպով ոգնում էին գյուղացիների միլիոնավոր մասսաները, վորոնք պայքարում էին ընդդէմ կուլակային ստրկութեան, հանուն կոլտնտեսային ազատ կյանքի:

Նա, այդ հեղափոխութիւնը, մեկ հարվածով լուծեց սոցիալիստական շինարարութեան յերեք արմատական հարցեր.

ա) նա լիկվիդացիայի յենթարկեց մեր յերկրի ամենաբազմամարդ շահագործողական դասակարգը, կուլակների դասակարգը, կապիտալիզմի ռեստավրացիայի պատվարը.

բ) նա կապիտալիզմ ծնող անհատական տնտեսութեան ուղուց հասարակական, կոլտնտեսային, սոցիալիստական ուղին փոխադրեց մեր յերկրի ամենաբազմամարդ աշխատավոր դասակարգը, գյուղացիների դասակարգը.

դ) նա խորհրդային իշխանութեանը սոցիալիստական բազա տվեց ժողովրդական տնտեսութեան ամենաընդարձակ ու կենսականորեն անհրաժեշտ, բայց և ամենահետամնաց բնագավառում՝ գյուղատնտեսութեան մեջ:

Դրանով իսկ յերկրի ներսում վոչնչացվեցին կապիտալիզմի ռեստավրացիայի վերջին աղբյուրները և դրա հետ մեկտեղ ստեղծվեցին սոցիալիստական ժողովրդական տնտեսութիւն կառուցելու համար անհրաժեշտ նոր, վճռական պայմաններ»¹:

Այդ հեղափոխութիւնը, վոր կատարվեց վերին, պետական իշխանութեան նախաձեռնութեամբ, Լենինի—Ստալինի կուսակցութեան նախաձեռնութեամբ և պաշտպանվեց ցածրից միլիոնավոր մասսաների կողմից, նախապատրաստվում էր պատմական զարգացման ամբողջ ընթացքով, բայց հարկավոր էին հատուկ պատճառներ, հարկավոր էին հատուկ նախադրյալներ, վորպեսզի այն ծավալվեր և սկսվեր 1929 թ.:

Ընկեր Ստալինի՝ «Մեծ բեկման տարին» հոդվածը, վոր հրատարակվեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութեան XII տարեդարձի ուր, 1929 թ. նոյեմբերի 7-ին, ցույց տվեց մեր յերկրի զարգացման հեռանկարները: Այդ հոդվածը ավարտվում է հայտնի խոսքերով.

¹ Համկ(բ) պատմութիւն, համառոտ դասընթաց, էջ 411:

«Մենք ամբողջ թափով դնում ենք ինդուստրացիան ճանապարհով—դեպի սոցիալիզմ, մեր հետևում թողնելով մեր դարավոր «ռուսեյսկայն» («рассейская») հետամնացությունը: Մենք դառնում ենք մետաղի յերկիր, ավտոմոբիլացիան յերկիր, տրակտորացիան յերկիր: Յեւ յերբ ԽՍՀՄ-ն ավտոմոբիլ նստեցնենք, իսկ մուժիկին՝ տրակտոր,—թող փորձեն հասնել մեզ արդո կապիտալիստները, վորոնք դուռը դնում եյին իրենց «քաղաքակրթությամբ»: Մենք դեռ կտեսնենք, թե այն ժամանակ յերկրներէն վորոնց կարելի յե «դասել» հետամնացներէ կարգը և վորոնց՝ առաջավորներէ կարգը»¹:

Ժողովրդական մասսաների շարժումը, մեծ բեկումը, վոր վրա հասավ 1929 թ., նախապատրաստել և կազմակերպել եր բոլշևիկներէ կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Ստալինյան գաղափարները մորիւլիզացիայի եյին յենթարկում աշխատավորներին, կազմակերպում եյին նրանց՝ պայքարելու դասակարգային թշնամու և նրա գործակալության դեմ: Ստալինյան գաղափարները, համակելով մասսաներին, դառնում եյին նյութական ուժ, վերափոխում եյին Խորհրդային յերկիրը: Ընկեր Ստալինը վոչ միայն մասնացույց եր անում սոցիալիզմի շինարարության հեռանկարները, պայքարի ու հաղթանակի ուղիները: Նա պրակտիկ կերպով ղեկավարում եր մեծ կառուցումը: Զուր չէր, վոր ընկեր Ստալինի առանձնասենյակում կախված եր Ստալինգրադի տրակտորային գործարանի կառուցման ընթացքի ամփոփագիրը, զուր չէր, վոր ամեն ուր ընկեր Ստալինը ուղղություն եր տալիս սոցիալիստական հարձակման բոլոր կարեւորագույն ճակատամարտի աշխատանքներին: Ընկեր Ստալինի առաջնորդությամբ կուսակցությունն աշխատավոր մասսաներին տանում եր դեպի սոցիալիզմի հաղթանակը:

1929 թ. դեկտեմբերի 21-ին յերկիրը նշեց ընկեր Ստալինի ծննդյան հիսնամյակը: Այդ ուրը դարձակ աշխատա-

վորների՝ դեպի իրենց առաջնորդը տածած սիրո և նվիրվածության ցուցաբերման ուր:

1929 թվականը՝ ստալինյան առաջին հնդամյակի առաջին տարին, մեծ բեկման տարին վերջանալու վրա յեր: Սկսվում եր նոր, 1930 թվականը: Յերկիրը դնում եր դեպի նոր մարտեր, սոցիալիզմի նոր հաղթանակներ:



¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 383:

Թարգմ. Ռ. Փորսուդյան
Խմբ. Մ. Արմենյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Հ. Դուրսեանյան
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արույան

Գլավլիտի լիազոր Վ. 1092, հրատ. № 780
Պատվեր № 22, տիրաժ 5000
Թղթի չափեր $72 \times 105 \frac{1}{32}$ (66.880 մմ. հիշ. 1 մմ. մամուլում)
 $1 \frac{3}{8}$ մմ. մամուլ, $\frac{3}{4}$ թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 19/1 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 16/II 1940 թ.
Գինը 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
Յերեան, Ալլանդերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0210782

30.211

ԳԻՆԸ 50 Կ.

Н. РУБИНШТЕЙН
1929 ГОД—ГОД ВЕЛИКОГО ПЕРЕЛОМА
Государственное издательство политической литературы
Ереван ● 1940